

HAMALSARAN: Revue Arménienne, SCIENTIFIQUE ET LITTÉRAIRE

---

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

[UNIVERSITÉ]

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԱՄՍԱԹԵՐԹ

---

Քննարկելը միշտ քանդող  
Գիտարկելը վերաշինող .  
Այս վերջինին դիմելու է,  
Առաջինին տրեղում հարկուր .

---

ԱՌԱՋԻՆ ՇԲՁԱՆ

1900

—

Մ Ա Ր Տ

—

ԹԻԻ 3

---

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

Մ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ | ԶՈՎՀ. ՇԱԻԱՐՇ

ՓԱՐԻՋ

---

Directeurs : MISSAK BAGHDASSARIAN § HOVHANNÈS CHAVARCH

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Պատմաբանականներ (Յովհ. Շաւարշ) . . . . . 113  
 Խմբորդականներ (Գարեգին Մեծատուրեան) . . . . . 120  
 Դաստիարակիչ Գիտութիւնը (անխոփեց Նշան) . . . . . 128  
 Գրական էջեր (Միսաք Պաղտասարեան) . . . . . 136  
 Պղինձը — Պատմական — (Գէորգ Մկրտիչեան) . . . . . 141  
 Գրութեան Բոյրը (Հրուշան) . . . . . 145  
 Յրակն. Առեւ. Վարժարանները (Առեւ. Վարժ. Ուսանող մը) 146  
 Վարակումները — Առողջապահական — (Նշան) . . . . . 151  
 Տգեղ Երեւոյքներ — Տեսութիւն մը — (Արամ) . . . . . 155  
 Ժողովրդական Գիտելիքներ . . . . . 160

Մանօթ. — Տեղի անձկութեան պատճառով, այս անգամ անկարելի եղաւ հրատարակել Նոյնանկէլի Բառերու շարունակութիւնը :

ՎՐԻՊԱԿ (քիւ 2)

էջ 67. տող 2, հրապարագիրներու — հրապարակագիրներու . տող 3 (վարէն), կուտա վերջինը — կուտար վերջին : էջ 68. տող 3, քրտաքրակայական — քրտաքրածնական . տող 19, դեղնակալանայտրակայական — դեղնակալանայտրակայածնական : էջ 71. տող 14, լեզուովս — լեզուովս : էջ 78. տող 12, Արտարբերել — Արտարբերել : էջ 94. տող 2 (վարէն), է — են : էջ 100. տող 3, կ'ըհամարէր — կ'արհամարհէր . տող 6, թղտատելու — թղթատելու . տող 38, յառաջեց — հառաջեց : էջ 101, տող 2, կրթնեցաւ — կռթնեցաւ . տող 5, իրականութիւն — իրականութիւն . տող 11, հիւանդութիւնը — հիւանդութիւնը : էջ 104. տող 8, դարցած — դարձած . տող 12, անկորոտութեան — անկորոտութեան . տող 4 (վարէն), պատասխանեց — պատասխանեց : էջ 109. տող 10, ընդարձակել — ընդարձակել :



# ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՆՆԵՐ

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱԻԱՐՇ

Դեռ ե՛րէկ էր, որ՝ ամանորի առիթով՝ տենդոտ շարժում մը կը տիրէր ամէն կողմ. դեռ ե՛րէկ էր, որ ամբողջ քրիստոնեայ աշխարհն իրար էր անցած, ու նոր դարուն հետ՝ « ջերմ ու սրտագին » բարեմաղթութիւններու հեղեղներ կ'ողողէին չորս կողմը. դեռ ե՛րէկ էր, որ միլիոնաւոր ոսկիներ, « նոր տարիի ընծաներուն » յատկացուած, բացառաբար, գրպանէ գրպան փոխադրուեցան. դեռ ե՛րէկ էր, որ գրեթէ ամբողջ մամուլը, միաբերան, յետադարձ ակնարկով մը հաշուեկշիռը կը ներկայացնէր անցնող դարուն, որ՝ բազմաթիւ վկայութիւններու համաձայն՝ որրանն եղած էր քաղաքակրթութեան ու մտաւոր եւ բարոյական յառաջդիմութեան :

Եւ վերջապէս, դեռ ե՛րէկ էր, որ ամէն անհատ, նորա-նոր յոյսերով տոգորուած, նորանոր երազներով արբշիռ, նորանոր առաջադրութիւններով ոգեպինդ, կը ձգտէր նեւուիլ սկսող դարուն գերիք, ուր իր կարծիքով՝ պիտի կրնար քաղել ապագայ երջանկութեան բոլոր եղն ու մեղրը . . .

Ու սակայն, այսօր, դարամուտի յաջորդ օրը, ամէն տեղ սկսած է արդէն տիրապետել նախկին անտարբեր թրմութիւնն ու մեռելութիւնը, ամէն մարդ վերստացած է իր առօրեայ կեանքին սովորական մտմտութիւնն ու տարժանքը, իրեն թէ արտասովոր բան մը տեղի ունեցած չլինէր : Փողոցներու մէջ դուք պիտի հանդիպիք միեւնոյն գունատ ու մտախոհ դէմքերուն, որոնք միշտ գէպի գետին թեքուած կը յառաջանան լռիկ մնջիկ, իրենց մտատանջութիւններովը պաշարուած :

Ինչ ու . . . Ու՞ր մնացին ապագայի վարդազոյն անուրջներով վեհապանծ գլուխները, որոնք պարզ թուականի մը փոփոխութեան մէջ կը կարծէին գտնել իրենց չարաշուք բախտին բարելաւութիւնը. ու՞ր մնացին, . . . Մի՞թէ այս-

չափ կարճ ժամանակի համար էին ա՛յնքան մեծամեծ յոյսեր ներշնչող պղատոնական քարոզները . . .

Իրականութիւնը տարբեր է սակայն : Տարիներն ու դարերը, որ յաւիտենական ժամանակին անսկիզբն ու անվերջ շղթայաւորումը կը կազմեն, միշտ յար եւ նման են իրարու . ու ամանորներն ու դարագլուխները ինքնին ոչ մի արժէք կամ նշանակութիւն կարող են ունենալ յառաջդիմութեան (progrès) տեսակէտով, եթէ մենք չիտումք գործնականապէս բարելաւութիւն մը մտցնել մեր ընկերական կեանքին, եթէ մենք, ձեռքերնիս ծալլած, իրերը թողունք իրենց բնական ընթացքին, մեր ուշադրութիւնը կեդրոնացնելով միայն բարեշրջութեան օրէնքին վրայ :

Ուսումնասիրենք անցեալը : Սկսինք ամենահին ժամանակներէն եւ համեմատենք դարերն իրարու հետ : Ապահովապէս կարելի է ըսել՝ որ անոնք հազիւ թէ առաւելութիւններ ունենան մին միւսէն, որովհետեւ քարեշրջութեան (évolution) կ'ընկերանայ միշտ անբաժանօրէն եւ յոռեշրջութեան (révolution) . այսինքն քաղաքակրթութեան անունին տակ հաւասարապէս կը զարգանան բարին ու չարը, ճշմարիտն ու սուտը, ազնիւ զգացումներն ու խարդաւանքը . որովհետեւ ներկայ դրութիւնով մէկին երջանկութիւնը կախում ունի միշտ միւսին թշուառութիւնէն, ու աղքատին խմորի դաշտին քերուքն է որ կ'երթայ աւելցնել հարուստին ոսկիները :

Այո, քաղաքակրթութիւնը, այն բազմաթիւ բարիքներուն հետ, զոր ա՛յնքան առատաձեռնութեամբ ըմբռնանած է մեզ, մանաւանդ այս վերջին դարերու մէջ, հասուցած է նաեւ անթուելի չարիքներ, որոնք ցեցերու նման կախուած մարդկութեան ստինքներէն՝ անընդհատ կը ծծեն ու կը ծծեն . . . :

Ընկերութիւնները ապականած են . ընտանեկան շրջանակները պղծուած՝ վատ բարքերու ազդեցութեան տակ . եւ կեղծիքն ու խարէութիւնը մեծ դեր կը խաղան առօրեայ կեանքին մէջ,

Շատ հազուադէպ ու աննշանակելի են այն դէմքերը, որոնք իրենց կեանքը, գոյութիւնը պահպանելու ոգորումին մէջ՝ բաց ճակատով ազնիւ պայքար մղեն, բնական կամ պատահական խոչընդոտներու դէմ : Մեծամասնութիւնը զինուած է միշտ նենգամիտ մեքենայութիւններով : — Մարդասէրի քողին տակ, վարագուրուած կը գտնուի շատ անգամ

մարդաստոչը հրէջ մը . ու երբեմն, բարեմիտ կարծուած ծիծաղներ շողոքորթի մը լորձունքը կը ցայտեցնեն մեր երեսին : Անձնական կիրքեր ու եսասիրական տուփոտ զգացումներ վերջացող դարուն առաքինութիւններն եղած են :

\*  
\*  
\*

Ուրեմն, եթէ իրապէս ցանկացող ենք մեր ընկերութիւններու բարելաւութեան, եթէ կ'ուզենք անկեղծօրէն որ քսաներորդ դարը վերապահէ իր զաւակներուն աւելի բարեբաստիկ օրեր, պէտք է լրջօրէն աշխատինք իւրաքանչիւրս իր կարողութեան չափով, առողջ ու հիմնաւոր դաստիարակութիւն մը տալ մեր նոր սերունդին եւ գործնականապէս սատարել ընդհանուր յոռաջգիմութեան գործին, որուն մէջ պարտաւորութիւններու ամենամեծ բաժին մը ունին հասարակային գործիչները, մասնաւորապէս՝ Մամուլի ներկայացուցիչները, գրադէտներն ու լիպտասանները, կղերականները, ուսուցիչները կամ դաստիարակները :

Նախորդ յօդուածով մ'արդէն բացատրած լինելով մամուլի ազդու դերը՝ ցեղի մը զարգացումին տեսակէտով, աւելորդ կը համարիմ ծանրանալ այդ մասին : Միայն, խօսքը մասնաւորելով հայ մամուլին վրայ, կարելի է ըսել՝ թէ հրապարակի վրայ գտնուող օրաթերթերուն եւ պարբերական հրատարակութիւններուն թիւը շատ իսկ պիտի լինէր արդէն՝ ժողովուրդի բարոյական ու մտաւոր բարգաւաճումին առաջնորդ ու ղեկավար հանդիսանալու համար . սակայն, — ինչ որ կարեւորն է եւ մանաւանդ ցաւալին, — մամուլը, ընդհանրապէս, շատ հեռու է տակաւին իր կոչումին բարձրութեան մէջ գտնուելէ :

Անձնասիրական շահեր, խնամիական կապեր, իրարագողական եւ այլ ստոր սողորութիւններ, զաղափարի ու զաւանանքի տարբերութիւններ, եւն, եւն, յաճախ կը կապտեն անոր անաչառ ոգին ու կը ջլատեն անոր կորովը՝ զօրավիլ լինելու լաւին, ու լաւին միայն :

Հայ մամուլը հիւսնդ է . մենք պէտք չունինք հիւսնդ մամուլի մը . մեղի համար անհրաժեշտ են առոյգ՝ քաջատղջ առաջնորդներ, որոնք բացարձակապէս անտեսն ինչ որ հանրութեան տեսակէտով զուրկ է որ եւ է օգտակարութենէ, ինչ որ անհատին, եսին շահն է միայն, եւ ամուր պատնէշի մը պէս պաշտպան կանգնին այն ամէն խնդիրներուն, որոնք կը ծառայեն ժողովուրդին շահերուն, որոնք կապ ունին հասարակութեան օգուտին ու բարելաւութեան հետ . մեղի համար հարկաւոր է առողջ զաղափարներով տոգորուած

մամուլ մը, որ կարենայ իսկոյն արձագանգ լինել հանրութեան իրաւացի պահանջներուն, վերջապէս մամուլ մը որ կարենայ, ոչ թէ անհատներու գոհացում տալ, այլ բո՛ւն իսկ ընդհանուրի պէտքերուն, որովհետեւ հասարակութեան մը շահն անհատինն ալ է :

Սակայն այստեղ ուրիշ, աւելի կարեւոր խնդիր մըն ալ կը ծագի: Եստեք իրաւամբ կարող են դիտել տալ որ, ամէն պարագայի տակ, Հայ մամուլը չպիտի կրնայ պէտք եղած օգտակար ծառայութիւնը մատուցանել հայ տարրին, քանի որ խիստ չնչին փոքրամասնութիւն մը միայն կը հետաքրքրուի անով եւ հետեւապէս կրնայ անոր ազդեցութեան տակ դառնալ: Ինչպէ՞ս ստուար մեծամասնութիւն մը բացարձակապէս հեռու է մամուլին հետ որ եւ է կապ կամ չփում ունենալէ, ինչ որ բացայայտ կերպով ցոյց կուտայ թէ մամուլը որ եւ է կերպով չի կրնար ներգործել այդ մեծամասնութեան վրայ:

Եստ ճշմարիտ է այս, եւ ներկայ պայմաններուն տակ ուրիշ տեսակ ալ չէր կրնար ըլլալ:

Բայց թէ չկա՞յ արդեօք որ եւ է միջոց մը, նոյն իսկ ներկայ պայմաններուն տակ, մամուլին աւելի մեծ ծաւալ մը, ժողովրդականութիւն մը տալու համար, կարելի է՞ արդեօք մեր թերթերն ու հանդէսները բովանդակել այնպիսի նիւթերով, որոնք պրաւեն բոլորին ունն ու ուրուշը, եւ հետեւաբար արձագանգ գտնեն ժողովուրդի ամէն խւերուն մէջ:

Այո, միջոցներ չեն պակսիր այդ նպատակին հասնելու համար. այդ բանին բոլորս ալ պիտի համոզուինք եթէ մէկիկ մէկիկ թղթատենք մեր թերթերն ու վերլուծենք իրենց պարունակութիւնը:

Ինչ նիւթերով կը զբաղին սովորաբար մեր տաճկահայ եւ ռուսահայ օրաթերթերը. — ներքին ու մանաւանդ արտաքին քաղաքականութեան վերաբերող խնդիրներ, գրական ու գիտական (խիստ հազուադէպ) տեսութիւններ, քննադատականներ (յաճախ կուսակցական), շատ քիչ անդամ՝ գաւառային թղթակցութիւններ (ինչ որ շահեկան պիտի լինէր, եթէ մեծ մասամբ թաղականի կամ վարդապետի կոնիւներուն արձագանգը չըլլար), ներքին եւ արտաքին լուրեր եւ վերջապէս թերթօն մը՝ առ հասարակ թարգմանածոյ:

Հանդէսնե՛րն ալ նոյն պարագային մէջ կը գտնուին, թէեւ բոլորովին տարբեր առումով. այսինքն՝ անոնց բովանդակութիւնը որքան ալ լուրջ ու գնահատելի ըլլայ,

դարձեալ չպիտի կրնան ծաւալ գտնել անդարգացած դասակարգին մէջ, որովհետեւ նիւթերու ընտրութիւնն ու մանաւանդ զանոնք ներկայացնելու կերպը շատ քիչ կը համապատասխանեն հայ տարրի մտաւորական զարգացումին ու հասողութեան :

Ինչպէս կ'ուզէք որ գաւառի մը խորը գտնուող մի անհատ, որ բարեբախտութիւնը չէ ունեցած դպրոց երթալու, զարգանալու, ժողովուրդի զաւակ՝ որ իր ամբողջ կեանքն անցուցած լինելով իր բնակարանին մէջ նոյն իսկ զաղափար չունի իրմէ 10 մղոն հեռաւորութեան մէջ գոյութիւն ունեցող իրերու վրայ, հետաքրքրուի այդ բովանդակութեամբ եւ ուզէ օգտուիլ անկէ, քանի որ գրեթէ բոլոր նիւթերն ալ օտար են իրեն համար եւ նոյն իսկ անհասկնալի :

Ուրեմն, որպէս զի ժողովուրդին անուսում դասակարգն ալ հաւասարապէս օգտուի հայ մամուլէն, աւելի շատ տեղ տանք այնպիսի խնդիրներու, որոնք ուղղակի առնջութիւն ունին բուն իսկ անոր առօրեայ կեանքին, վարքին ու բարքին, սովորութիւններուն հետ. հարուածենք անոր աւանդական կամ ժառանգական մոլութիւնները, վատ բարքերը, դրուատենք ու քաջալերենք ինչ որ լաւ է իր մէջ ու գովեստի արժանի :

Ասով բնականաբար ըսել չենք ուզեր՝ թէ իսպառ վտարել պէտք է այն ամէն խնդիրները, որոնք թէեւ մեր ժողովուրդին հետ անմիջական կապ չունին, բայց չեն դադրիր օգտակար լինելէ. միայն հարկ է նկատել որ այդ խնդիրներն եւս աւելի շահեկան դարձնելու միակ միջոցն է հայացնել զանոնք, այսինքն տալ անոնց այնպիսի դրոշմ մը՝ որ միջակ եւ ստորին զարգացումի տէր մարդն ալ հաւասարապէս օգտուի անկէ :

Ուրիշ խօսքով, մեզի համար անհրաժեշտ է չափուած, ձեւուած մամուլ մը, որ ամենէն բարձր խնդիրներն իսկ ներկայացնէ հասարակութեան, զանոնք ձուլելով անոր հասկացողութեան, միջոցներուն ու պիտոյքներուն համեմատ :

Այսպէս եթէ տոնամային կնիք մը, բնատպութիւն մը տանք մեր մամուլին, պիտի տեսնենք որ ան տասնապատիկ աւելի պիտի տարածուի ժողովուրդին մէջ եւ շատ աւելի օգտակար պիտի հանդիսանայ :

Հրապարակագիրներուն կը մնայ լուրջ կերպով մտածել այդ մասին՝ եւ ձեռք ձեռքի տալ հարկ եղածը տնօրինեւ համար. այդ իրենց բարոյական պարտաւորութիւնը պէտք է ըլլայ :

\*  
\*  
\*

Ամէն դարու եւ ամէն ժամանակի մէջ, կրօնականութիւնը մե՛ծ դեր խաղացած է միշտ, մարդկային ցեղերու բարոյական ընթանումներուն ու նոյն իսկ մտաւոր յառաջ-գլխութեան գործին մէջ: Քրիստոնէութենէն առաջ ինչ գործ որ սկսած են քուրմերն ու դէնպետերը, ինչ պաշտօն որ ունեցած են՝ հեթանոս ազգերու մէջ՝ սիրտերն ու հոգիները մէկ գաղափարով, մէկ զգացումով իրարու զօդելու համար, քրիստոնէութիւնէն ի վեր, կղերականներն իրենց աստիճանին ու կարողութեան համեմատ կը շարունակեն նոյն գործն ու պաշտօն ունին՝ քրիստոնեայ ազգերու մէջ՝ դարձեալ միացնել սիրտերն ու հոգիները, բայց աւելի վե՛հ գաղափարով՝ որ է ճշմարտութիւնն ու աւելի բարձր զգացումով՝ որ է արդարութիւնը:

Պատմութիւնը կը յիշատակէ կղերականներ, որ իրենց սուրբ կոչումին իբրեւ անձնուրաց զինուորներ՝ զիմագրաւած են ամէն վտանգ ու արհամարհած նոյն իսկ մահը՝ ճշմարտութեան լոյսը տարածելու համար:

Ուրիշներ, հրաժարած են աշխարհային ամէն փառքերէ ու հարստութիւնէ, եւ մարդասիրական անսօգիւտ զգացումներով տոգորուած, հաստատած են հիւանդանոցներ, անկեղանոցներ, աղքատանոցներ եւն, եւն, եւ իրենց ամբողջ կեանքը մաշած են՝ տունէ տուն այցելելով իրենց սիրելի հօտին, օգնելով թշուառին, խնամելով հիւանդը, մխիթարելով տառապեալն եւ վշտակցելով սգաւորին: Կան ալ որ, դարձեալ, ամբողջովին նուիրուած են կրթութեան ու դաստիարակութեան գործին, եւ ճոխացուցած իրենց երկասիրութիւններով՝ զպրութեան ու գիտութեան գանձարանը:

Ասոնք ճշմարիտ կղերականութեան մը օրինակելի ատկարներն են: Մենք ալ ունեցած ենք այդ տեսակ կրօնականներ, որոնք իրաւունք ունին մեր երախտագիտութեան արժանանալու:

Բայց այսօր, ներկայիս մէջ, խիստ դառն ու ցաւալի է նկատել՝ որ կղերականութեան մեծ մասը կարծես բոլորովին այլասերած՝ հակապատկեր մը կը ներկայացնէ, բոլորովին անարժան իր անունին ու կոչումին: Բարոյականի ղեկն իր ձեռքին մէջ ունենալու կոչուած կղերը, ռամիկէ մը տարբերութիւն չունի շատ անգամ. — ա՛յնքան տգէտ է ան ու բարոյապէս ինկած: Ու զարմանալին այն է որ, տասնեւիններորդ դարուն մէջ մարդիկ որքան որ ձգտած են զարգանալու, յառաջադիմելու, կղերականութիւնն աւելի ու

աւելի դիմած է դէպի տգիտութեան խաւարը, դէպի մեղ-  
կութեան ու ստորնութեան գիրկը :

Մարդ երբ աչքի առջեւ կը բերէ այս տխուր իրողու-  
թիւնը, տեսակ մը խորին ցաւ ու միանգամայն արդար  
բարկութիւն կը զգայ, ու կը հարցնէ ինքնիրեն. — Ինչո՞ւ  
այս բարոյական անկումը :

Այս հարցն արդէն երկար վիճաբանութեան ենթար-  
կուած լինելով հայ մամուլին մէջ, աւելորդ է ծանրանալ  
հոս՝ մանրամասնօրէն պատճառները քննելու համար . միայն  
պէտք է նշանակել որ, ամենօրեայ դառն փորձերու հաս-  
տատութեամբ, առաջին անգամէն աչքի կը զարնէ այն  
հանգամանքը՝ թէ կարգ մը մարդիկ — բոլորովին անարժան ու  
անկարող այդ բաձր կոչումին, — սպրդած են կղերականու-  
թեան մէջ, եւ այսօր, իրենց գձուձ արարքներով, նոյն իսկ  
պատճառ եղած՝ սեւ արատ մը բերելու իրենց արժանաւոր  
հոգեղբայրներուն վրայ :

Ոմանք խիստ հարեւանցի կերպով կը նային այս խնդի-  
րին վրայ, ու կը կարծեն թէ կղերականութիւնն, այսօր  
մեծ գեր մը չի կրնար ունենալ արդէն՝ ընկերական կեան-  
քին մէջ, եւ թէ զարգացումի ու յառաջդիմութեան գործը  
որ եւ է կերպով յարակցութիւն չունի անոր հետ, որովհե-  
տեւ մտածողութեան եղանակն ու դաստիարակութեան ըս-  
կզրոււնքները փոխուած են :

Ընդհակառակը, ներկայ պայմաններուն տակ, մենք ու-  
րիշ ժամանակներէ աւելի՛ պէտք ունինք կղերականներու  
աջակցութեան . որովհետեւ, անուրանալի է որ, անոնք աչ-  
խարհականներու վրայ մեծ առաւելութիւններ ունին . կան  
բազմաթիւ պարագաներ, ուր աշխարհիկ մը անձեռնհաս կը  
գտնուի, մինչ կրօնաւորն ամէն միջոց ու դիւրութիւն ունի  
գործ մը գլուխ հանելու համար :

Ուրեմն, պէտք է ցնցել հայ կղերականութիւնը, պէտք  
է յիշեցնել անոր՝ որ կատարելիք շատ սուրբ ու նուիրական  
պարտաւորութիւններ ունի, պարտաւորութիւններ՝ զոր  
ինքը մեզմէ աւելի լաւ ըմբռնած ըլլալու է :

# Խ Մ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր Ը (FERMENTATION)

I

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Հին մարդկութենէն մինչեւ Բաադէոն եւ Տիւքլօ Երկրագնտիս վրայ՝ երբ բոյսերն ու կենդանիները ստեղծուեցան խմորումներու երեւոյթներն ալ անոնց հետ մէկտեղ երեւան ելան: Խմորում տեղի կ'ունենար կենդանիներու ստամոքսին եւ աղիքներուն մէջ, խմորում տեղի կ'ունենար՝ երբ կենդանի մը կը սատկէր եւ բոյս մը կը փատէր:

Մարգիկ շատ ուշ իրենց ուշադրութիւնը դարձուցին խմորումներու վրայ. հաւանական է որ առաջին անգամ դիտեցին խաղողի շերտային ուռանց կրակի կամ ուրիշ որ եւէ գործողութեան ինք իրեն եփելու կամ եռալու երեւոյթը:

Խմորումը տեսակ մը եռ գալ կամ եփելէ, որ ինքնին կը գոյանայ, բայց գիտողին վրայ այն սպաւորութիւնը կը թողու, որպէս թէ խմորուող հեղուկին ներքեւ կրակ վառուած ըլլար:

Խմորումի ժամանակ՝ շերտայի ներքեւի մասերէն դէպի մակերեւոյթը կը բարձրանան անհամար կազային պղպջակներ եւ երբ հեղուկին երեսը հասնին կը պայթին եւ իրենց պարունակած կազը կը ցրուի օդին մէջ:

Եբրայեցիները խմորումի արտաքին երեւոյթին, այսինքն եռալու տեսքին նայելով՝ գինիին իիւն (yine) ըսած են, որ պարզապէս կը նշանակէ եռալ կամ եռ գալ. գիտնականները կը կարծեն, որ իին՝ բառին արմատը եբրայեցիներէ աւելի հին ժողովուրդներու կը պատկանի, հետեւաբար եբրայեցիներէ առաջ ուրիշ ժողովուրդներ գիտած են խմորումին երեւոյթները:

Fermentation բառը, որ աւելի նոր է, կուգայ լատին *fervere* բառէն որ կը նշանակէ եփել:

Levure եւ leaven (քաղցուն, խաչ, մայա) բառերն ալ միեւնոյն գաղափարը կ'արտայայտեն:

Մեր գրական լեզուի մէջ՝ fermentationներու խոնորով կ'ըսենք. սակայն ժողովրդական լեզուն գործողութեանց երեւոյթներու տարբերութենէն՝ խմորումները զանազան անուններով մէկզմէկէ կ'որոշէ եւ կ'ըսէ՝

Ալֆոյական խմորումներու (fermentations alcooliques) եռայ եւ եփել.

Հացի խմորումին (fermentation panique) ֆաղցել, ֆաղցրել.

Քացախային խմորումին (fermentation acétique) ֆացխել կամ ֆացախել:

Նախապատմական ժամանակներէ ի վեր՝ մարդկութեան ծանօթ էին մանաւանդ ալբօլային խմորումները եւ ասոր ապացոյց ու վկայ ունինք նոյն նահապետի, Օսիրիսի եւ Բագոսի անուաները:

Գինիէն աւելի մօտաւոր ժամանակի գործ է գարեջուրի պատրաստութիւնը, որովհետեւ աւելի բաղադրեալ աշխատութիւններու կը կարօտի. ասով մէկտեղ եգիպտացիք, Սպանիացիք, Գաղղիացիք նոյնիսկ մեր նախնի հայերը կը պատրաստէին գարեջուրեր իրենց երկիրներուն մէջ:

Հացը խմորելու գաղափարը՝ ա՛լ աւելի ուշ ունեցան մարդիկ. ինչպէս գիտենք Աստուածաշունչ գիրքէն, Հայր Աբրահամ քաղարց (չխմորած, չքաղցած) հացով հիւրնկալեց, Մամբրէի հովտին մէջ իրեն երեւցող հրեշտակները:

Քաղցած հացի գործածութիւնը հին ժամանակները պիղծ կը նկատուէր: Մովսէս մարգարէի օրով միայն արգելքը կը վերցուի:

Մարդիկ, երկար տարիներ, պարզ ծանօթութիւններ ունէին միայն խմորումներու վրայ, օրըստօրէ խարխափումով յառաջանալով սորվեցան գինիները երկար պահել ունիւն (résine) եւ իսկուքիւններ (essence) խառնելով եւ կամ գինիի մակերեւոյթը ձէթի խառով մը ծածկելով. այս միջոցները ցոյց կուտան, որ սկսած էին արդէն քացախային խմորումն ալ ճանչնալ:

Պատմութիւնը մեզ կ'աւանդէ, որ Կատոն գինիի տակաւներուն մէջ ծծումբ կը վառէր:

Ժամանակին հետ հացագործութիւնն ալ առաջ գնաց. հացագործները Գաղղիոյ մէջ առաջին անգամ սկսան գործածել գարեջուրի ֆաղցուն (Levure) փոխանակ ֆաղցած խմորի (մայա) եւ այսպէսով պատրաստուած հացերը աւելի դիւրամարս եղան:

Նախնիք այս երեւոյթներէն ոչինչ կ'ուսումնասիրէին. միայն փորձառութեան կը հետեւէին մինչեւ XVI դարու վերջը:

Երկար պատերազմներէ յետոյ, երբ խաղաղութիւնը վերահաստատուեցաւ, Արապ գրագէտները որ Յունաց գիտական աւանդութիւնները երկիւղածութեամբ պահած էին, յանձնեցին զանոնք արեւմտեան գիտնականներու:



կուտան անոնց ամենատես աչքերը եւ նուրը ու զննող միտքը . եւ արդարեւ այդ ժամանակի արապները միւս ժողովուրդներէն կը զանազանուին իրենց դէպի խոհական գիտութիւնները ունեցած ճաշակովը եւ հակաճառող մտքովը :

Ուղղակի կամ անուղղակի կերպով՝ արապները իրենց Սպանիոյ դպրոցներովն ու գրուածքներովը XII, XIII, XIV դարերու նշանաւոր մարդոց կրթիչն եղած են եւ անոնցմով ալ ամբողջ միջին դարու, որով միջին դարը կը կոչուի արաբական կրթութեան դար :

Միջին դարու գիտական գրքերը աւելի ճառախօսութիւններ կը պարունակեն քան գիտական բացատրութիւններ : Ռէյմօն լիուլի հայեացքով օղին՝ օղի չէ, այլ գինիի եթերական գոյութիւնը, կ'ըսէ, կամ անոր ազնուագոյն մասը եւ ազգի մը սեռը՝ որուն մէջ երկնային ու գերբնական յատկութիւններ կը տեսնէ . անշուշտ այսպիսի վարդապետութիւններու պատճառ կ'ըլլան խել մը անվերջ վիճաբանութիւններու, որոնց մէջ անտարակոյս երբեմն երբեմն ճշմարտութեան նշոյլներ կը մտնեն . ճշմարիտը սուտին եւ սուտը ճշմարտին հետ վիճելով՝ անկարելի է որ մի քանի ճշմարտութիւններ չլսուին . բայց ինչ օգուտ երբ սուան ու ճշմարիտը իրարմէ չեն կրնար զանազանուիլ :

Պ. Տիւբլօ գիտելով սա եզրակացութեան կը հասնի . «Մտաւորական զարգացման ընդհանուր ձեւին պատճառով, միջին դարու մէջ, բառը կանխած է գաղափարը եւ գաղափարը՝ գիտութեանց մէջ; միշտ կանխած է գործը . բառը ինքնին արժէք չունի . եւ գաղափար մը քանի կը մնայ մտքի մի հայեացքը՝ միշտ հակառակ գաղափարի մը հաւասարակշիռն է . համոզողը միայն արդիւնքն է, որ կրնայ հաւատացնել : »

Ալքիմիստները խմորումի վրայ համոզող արդիւնքներ չեն կրցած ձեռք բերել եւ հացի ու գինիի խմորումին վրայ իրենց գծած սահմանները բոլորովին մութ, անորոշ եւ յաւակնոտ են : Երբեմն ակնարկութիւններ կ'ընեն թէ՛ խմորուած ալիւրը՝ կրնայ ծառայել իբր քաղցուն, բայց խմորուած նիւթերու բնութիւնը չեն ճանչնար, ոչ ալ խմորումէ առաջ եկածներունը . կը ճանչնային միայն ալքոլային խմորումները, որոնք արդէն շատոնց իվեր ծանօթ էին, որով իրենց ունեցած բոլոր ծանօթութիւնները խառն ի խառն եւ անհիմն էին :

Բարասէլզ(1493—1541) իր խոհուն ուսումնասիրութիւններովը մարդոց քիչ մը գիտցածին ունայնութիւնը ցոյց տուաւ . թէեւ ինքն ալ փոքրիկ ճշմարտութիւններ երեսան հանեց բայց իր մեծ հանճարը ու նախնի աւանդութիւններու

գէժ ունեցած ասեղութիւնը զինքը նշանաւոր եւ զօրեղ ազդեցութեան տէր ըրին՝ իր ժամանակակիցներուն մէջ . կը հակառակի նախնեաց որովհետեւ անոնք շահագիտական փիլիսոփայութիւնը կը մտցնէին գիտութեանց մէջ :

Բարասէլզ կը նկատէր մարդ էակը քիմիական բաղադրեալ մարմին մը, որուն ո՛րեւէ ապականումէն կը ծնէին հիւանդութիւնները . ջերմը առաջ կուգայ, կ'ըսէր, այն պատճառով՝ որ մարմինին մէջ գտնուած աղտեղի նիւթերը, կղկղանքները՝ փոխանակ դուրս ելլելու, կը մնան փորուն մէջ . այս մտածումը տեղի տուած է, որ մարդիկ հիւանդութեանց գէժ կուտելու համար քիմիական դեղերու խուզարկութեան գիմնն :

XVII դարուն կ'սկսին գիւտերու շարքեր մէկմէկու յաջորդել :

Վան — Հէլմօն, առաջին անգամ, ամխաթթուն [acide carbonique] կը գիտէ գինիի խմորումին, մարսողութեան, փատութեան, թթուններու ազդեցութեան ներքեւ գտնուող ֆարպօնաքներու [carbonates] մէջ եւ կը զանազանէ ուրիշ կազերէ . երջանիկ խուզարկողը այնքան կ'ոգեւորի իր գիւտէն, որ մինչեւ անգամ կը չափազանցէ իր զաղափարը, յայտարարելով, որ գործարանաւոր կեանքի մէջ տեղի ունեցող բոլոր փոփոխութիւնները, նոյնիսկ ծնունդը, խմորիչէ մը առաջ կուգան :

Վան — Հէլմօնի ժամանակակից ուրիշ գիտնական մը, Պօյլը, որ աւելի բեղուն եւ արդիւնատու եղած է, հետեւեալ նշանաւոր նախադասութիւնը գրած է . « Դարձեալ կը կրկնեմ, ես յաւակնութիւն չունիմ, որ ստորին եւ գոեհիկ քիմիան կրնայ բժշկին ուսուցանել բաշօլօլիակալն [pathologique] երեւոյթներու ամբողջովին կամ մասնակի բացատրութիւնը . բայց ճշմարիտ տարրաբանութիւնը բժշկին կրնայ ծառայել հասկնալու համար, ամբողջովին կամ մասամբ, մի քանի երեւոյթներ, որոնք առանց տարրաբանութեան չեն բացատրուիր լուրջ կերպով . կը յաւելում, նա որ կը հասկնայ խմորիչներու եւ խմորուներու բնութիւնը՝ անշուշտ տղէտէն մեծ առաւելութիւններ կ'ունենայ . որովհետեւ նա, կարող կ'ըլլայ գոհացուցիչ կերպով շատ մը հիւանդութեանց երեւոյթները պարզել, որոնք խմորմանց վարդապետութեան վրայ ծանօթութիւն չունեցողներէն բնաւ չպիտի հասկցուէին : » Այսօր Ռօպէռ Պօյլը գիտնականի գուշակութիւնները ճշմարտութեանց շարքը անցած են :

Բիւնքէլ (1630 — 1702) կը պնդէ թէ՛ ստամոքսի ցուերու պատճառը աղտեղի նիւթերն են, որոնք խմորուելով

անոր վրայ կ'ազդեն . իր վարդապետութիւնը կը հաստատէ սա բանին վրայ թէ թթուները եւ լեղի բոյսերը, որոնք խմորումը կ'արգիլեն, ստամոքսի ցաւերը բուժելու լաւ դարմաններ են :

Պէշէր (1628—1685) իր ժամանակակիցներուն մէջ ամենէ լաւը ուսումնասիրած է խմորումի երեւոյթները . « Ես խմորումներու մէջ գիտնական մի քանի տարիներ անցուցի, որպէս զի ամենքը տեսնեմ եւ ինչ որ կը գրեմ ոչ Անճէլ Սալաի եւ ոչ ալ ուրիշ ժողովողներու հետեւելով է » : Այս գիտնականը բաւական ճիշտ ու ընդարձակ գաղափարներ ունի երեւոյթներու ամբողջութեանը կամ մասերուն վրայ : Իր կարծիքով « Խմորումը գործողութիւն մ'է, որու մէջ տարբազարեալ մարմինը ամբողջովին կամ իրեն նման մասունքներէն մէկ քանին, կը քիչնան եւ միանալով կը ծնին բազարեալ նոր մարմին մը, որ կրնայ ուրիշ գործողութեանց ծառայել :

Բոյսերը խմորուելէ ետքը կը փտտին, բայց կենդանիները կրնան առանց փտտելու խմորումներ ունենալ, օրինակի համար արեան մէջ կ'որոշուին երկու տեսակ խմորումներ, բուն խմորումը եւ թթուիլը . առաջինը յատուկ է շաքարոտ հեղուկներու : Մի քանի բոյսերու, ինչպէս ծլած գարին խաշելով ստացուած բուսաջուրը կրնայ խմորուել եթէ պէտք եղած քանակութեամբ շաքարային սկզբունքներ պարունակէ իր մէջ :

Խմորումներու միակ պատճառը խմորիչներն [ferments] են : Ալբուլի առատութիւնը կը դադրեցնէ խմորումը՝ յատակը չորեցնելով քաղցունը (մայա) կամ անոր ամենէն ծանր մասունքները :

Ջերմութիւնն ալ կ'արգիլէ խմորումը . տաքուած շիրան աւելի ուշ կը խմորուի քան բնականը . վերջապէս մարմինի մը կազմող մասերը ջերմութեան ազդեցութեամբ կ'անօրրանան եւ պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ փոքրիկ կազային պղպջակներ, որ ծնունդ կ'առնեն խմորիչներէն : »

Այս վերջին գիտողութիւնները գիտութեան այժմեան գաղափարներուն համեմատելով կրնան խորունկ իմաստ մը ունենալ, բայց պայմանաւ որ, բան մը աւելցուի ինչ որ Պէշէր երբեք չէ ըրած . նա պարզապէս ըսել կ'ուզէ, որ կազի պղպջակները խմորիչներէն առաջ կուգան, ինչպէս շոգիի պղպջակները եռացող հեղուկի ամանին ամենէն շատ տաքած մասերէն . գիտողութիւնը նուազ ճիշտ չէ, եւ կը նշմարուի իր դիտողութիւններէն, որ խելօք գիտնականը, մօտէն գիտած է խմորմանց երեւոյթները :

Պէշէրի աշակերտը Սդալ որ զմայլած է իր վարպետին վրայ եւ տպագրել տուած անոր հեղինակութիւնները, չէ հետեւեալ զգրախտարար գիտնականին քայլերուն:

Սդալի մեծ հանճարը եւ բեղուն միտքը գիտութեան այս կարեւոր կէտը կրնային լուսարանել, եթէ աշխատէր ուսումնասիրել:

Սդալ տեսագէտ մ'է [théoricien] եւ գտած է կարեւոր բան մը, եթէ վառելանիւթ ածուխը տաքցուի հողի մը (մետաղական օքսիտ) հետ իր այրելու կարողութիւնը կը կորսնցնէ եւ հողին կուտայ: Երկար տեսութիւններ գրած էր այս խնդրոյն վրայ, որոնք բաւական երկար տարիներ տեւեցին. բայց որովհետեւ հաստատուն չէին Լավուազիէի մէկ փորձովը հիմնայատակ եղաւ:

Սդալի խմորումներու սասին ըրած տեսութիւնները նուազ հաստատուն էին: Ուիլիսի վարդապետութիւնները առաջին անգամ ինքը մտցուց խմորումներու մէջ եւ իր հեղինակութիւնովը հաստատեց զանոնք. իր կարծիքով փտտութեան հասած բոլոր մարմինները իրենց վիճակը շատ դիւրութեամբ կուտան ուրիշ չափականուած մարմիններու. «փտտած մարմին մը, ներքին շարժումէ մը մղուած, ամենայն դիւրութեամբ կրնայ մղել, նոյնպիսի ներքին շարժումով մը ուրիշ հանգարտ մարմին մը, եթէ նա արդէն տրամադիր է նմանօրինակ շարժումի: Երկու շրջան ունին խմորումները. առաջինին մէջ խմորուող նիւթի զանազան հիւլէները [molécule] մեղմօրէն կը շարժին եւ քիչ շատ հիւժուած մասերը մէկմէկու կը միանան. երկրորդին մէջ, մասունքները զիրենք շարժող շարժումին պատճառով մարմնէն կը բաժնուին եւ նման մասունքներ ուրիշներէ մերժուած մասունքներու կը միանան: Խմորիչները միայն կը միջամտեն՝ խմորուող հեղուկի նմանող մասունքներուն հաղորդելու իրենց շարժումը, եւ ազդեցութիւննին պարզապէս շարժողական է»:

Սդալի գաղափարը ծագում առած է երկու բաներէ, հացի ու գինիի պատրաստութենէն. առաջինը կը համապատասխանէ խմորումին սկզբնական շրջանին, որուն մէջ շարժումը տկար է եւ խմորիչներու նմանող մասերը իրենց կարգին խմորիչ կ'ըլլան. մինչդեռ երկրորդը՝ ընդհակառակը եւալու ոյժով շարժումներ ունի որով հեղուկին կը հաղորդէ կազը եւ ոգին (esprit): Այս երկու երեւոյթները ընդհանրացնելով՝ Սդալի եւ իր նախորդներու գծած սահմանը կ'ուսննանք աչքի առջեւ. եթէ Սդալ որոշ ձեւ մը տուած չէ պատճառն այն է որ Տէքարդի *théorie atomique*ը (հիւլէա-

կան գրութիւն) տարրաբանութեան մէջ մտած էր եւ Սդալէ առաջ այդ գիտութիւնը բացատրութիւններով խճողուած էր. մի քանի մարմիններու սրածայր արովները եւ ուրիշ մարմիններու դիւրակոր աթոմները միշտ դեր մը կը կատարէին: Սդալէ 30 տարի առաջ 1659 ին, Լըֆէվը գրած է քիմիա մը, որ լաւ օրինակներ կը պարունակէ. «խմորումը կ'ըսէ, թթուներու, միզայիններու [urineux] կամ աղիաղեաններու [alcali] չարժու՛մ մ'է, որոնք մէկմէկու դէմ կը կոտորին եւ մարմինը կազմող մասնիկներու չարժու՛մ կուտան:

Լըֆէվը 15 տարի վերջը Լէմըռի հետեւեալ սահմանը կուտայ «խմորումը եռալ մ'է, որու պատճառը ոգիներն են [esprit], որոնք մարմնէ մը դուրս ելլելու համար ճեղքուածքներ կը փնտռեն եւ եթէ իրենց ճանապարհին վրայ պատահին երկրային կոշտ մասունքներու որոնք իրենց անցքը արգելին, ուռեցնելով կը նրբացնեն այդ նիւթերը մինչեւ որ պատռին. անոնց ճեղքուածքէն դուրս ելլող ոգիները կը բաժնուին, կը զատուին, այնպէս որ նիւթի նախկին բնութիւնը բոլորովին կը փոխուի:

Լըֆէվըի, Լէմըռիի, ուրիշ ժամանակակից քիմիագէտներու դժած սահմաններն եւ Սդալի թէօրիներն են, որոնք նկատուած են շատ գրաւիչ եւ փիլիսոփայական:

Թէօրի մը գրաւիչ եւ փիլիսոփայական ըլլալու համար պէտք չէ որ բացարձակ ճշտութիւն ունենայ, բաւ է որ բնուուն ըլլայ. Սդալի թէօրիները բեղուն չեն:

Սդալի ժամանակակից ուրիշ գիտուններ նոր ճշմարտութիւններ կը գիտեն կազմ ուսումնասիրութեամբ:

Մօլթրէլ Տէլիմօն, 1719 ին, կազը շուրի մէջէ անցնելով տեսանելի կ'ընէ:

Հալ [1677—1761] կազը երկաթէ կամ ապակիէ խողովակներու մէջէ կ'անցնէ:

Պլաք [1728—1799] կազերու բնութիւնը կ'ուսումնասիրէ եւ մէկզմէկէ կը զանազանէ, մասնաւորաբար ածխաթթուն կը կղզիացնէ, անոր յատկութիւնները կը ճանչնայ եւ վան Հէլմօնի չգիտածները կը գտնէ՝ այսինքն թէ՛ խմորումներու ժամանակ գոյացած կազը ալքոլական խմորման միակ արտադրութիւնն է, որ առաջ կուգայ ածուխի այրումէն եւ թթուներու carbonate alcali ներու վրայ ըրած ազդեցութենէն:

Պլաքի ժամանակակից գիտուն մը, Մաքպոլիտ, քայլ մը աւելի առաջ կ'երթայ եւ կը նշմարէ որ ածուխի այրումը եւ թթուներու ազդեցութեան ներքեւ կրային գետիններու լուծուիլը մասնաւոր յատկանիչ ունին հաստատուն մար-

միններու կցորդութիւնը [ cohésion ] քայքայելու եւ անխաթիւ գուրս տալու, ուրկէց առաջնորդուած է մտածել, որ բայերու եւ կենդանիներու կցորդութիւնը այս կազով կը պահուի միայն եւ փտտութիւնը կրնայ քայքայել զայն:

Մաքսիմ անձիշտ գիտողութեանց վրայ յենլով խել մը նկատողութիւններ կ'ընէ, որոնք իր ժամանակին շատ գնահատուած էին:

Վերջապէս շնորհիւ Պլաքի աշխատութեանց, խմորումներու կարգը արագօրէն կը յառաջանայ, կը հասկնան որ շաքարը կ'ահետանայ, ալքօլ եւ անփաթիւ կը գոյանայ. այսպէս ձեռքի ներքեւ կ'ունենան երեւոյթներու ծանօթութեանց գլխաւոր տարրերը, միայն պէտք էր անոնց փոփոխակի յարաբերութիւնները որոշել, կարգադրել եւ հաստատել:

Հաժուազիէի գործն եղաւ բեղուն կերպով ուսումնասիրել խմորումները. տարրալուծութեան մէջ իր ամենամեծ եւ հրաշալի գործն է նաեւ կշիռի գործածութիւնը:

Հաժուազիէ իր ալքօլային խմորումներու յիշատակագրին մէջ նուրբ եւ մէկին կերպով կը պարզէ իր սկզբունքները եւ բարձրագլուխ կը հաստատէ ճշմարտութիւնը:

## ԴԱՍՏԻԱՐԱԿԻՉ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

\* \* \*

**Ո**րչափ գրուի, որչափ խօսուի ընդհանուր դաստիարակութեան մէջ, գիտութեան ստանձնած դերին վրայ, դարձեալ քիչ է: Քանիցս Հաւադարան առիթ ունեցաւ այդ մասին շեշտելու. բայց քանի որ ժարգկային մտքի եւ կեանքի այդ բարերար ազդակն որակելու ու իր կարելորդութիւնը պատշաճօրէն հոգը, այսօր, քաղաքակիրթ ժողովուրդներու մասուլիսն ընդարձակ սիւնակները կը գրաւէ՝ մենք, լինելով գիտութիւններու մէջ յետամնաց ժողովուրդ մը, որ՞քան եւս աւելի այդ ճամբով գրելու ու խօսելու պահանջը պիտի զգայինք: Ահաւասիկ թէ՛ ինչ կը գրէք երեւելի գիտնական մը, Մ. Պերթըլօ, մասնաւորապէս դաստիարակիչ գիտութեան վրայ, Ռըվիւ տէ Տէօ Մոնտի իր մէկ ընդարձակ յօդուածին մէջ:

— Սակայն, եթէ կեանքի նիւթական պայմանները փոխուած են, եթէ դրամագլուխներու գիզուելոյն ու մարդկային վաստակի արտադրիչ ոյժին աճելոյն առաջացած է աստիճանաբար ընդհանուր բարեկեցութիւնը, ու աշխատաւորները ստացած են յարաբերական անկախութիւն մ'ու իրաւունքներ զոր չունէին երբեմն, ու այս բոլորը յօգուտ մարդկային ցեղի երջանկութեան կը ձգտին դարձեալ բողբոջելու։ այս ամեն առաջդիմութիւնները, պէտք է երբէք չանտեսել, չենք պարտիր ոչ գրական ուսումնասիրութիւններու եւ ոչ ալ աստուածաբանական, կրօնական եւ իմաստասիրական վիճաբանութիւններու։ Ո՛չ, անոնք միայն եւ միայն կը վերաբերին գիտութիւններու կատարելագործումին, ինչպէս նաեւ ընդհանուր հարստութեան, որ անկէ ծնունդ առած է։ Ճշմարտութիւն մը որ նշմարուած էր ԺԸ դարէն սկսած, ուր հուշակեցին գիտութեան եւ տրամաբանութեան մօտալուտ յաղթանակը. եւ ինչ որ կը հաստատուի ամեն կողմէ՝ մեր օրերը սկսող եւ շարունակուող քաղաքակրթութեան կերպարանափոխութիւնէն իվեր։

Ճարտարագործութեան անհունապէս կատարելագործումը, ինչպէս նաեւ մարդկային մտքի ազատ թռիչները, կը պարտինք, կրկնենք զայն միշտ, ժամանակակից գիտութեան գիւտերուն։ Եթէ մարդկային ցեղի տրամագրութեան տակ գրուած կերակուրի՝ սնունդի համազումարը օր ըստ օրէ կ'աճի, ոչ թէ տրամաբանական դատողութեան մը կամ աստուածաբանական ճարտարախօսութեան մը ազդեցութեամբ է, այլ քիմիաբանական, մեքենական եւ բնախօսական արդիւնքներու կարեւորութեամբ, որոնք կերպարանափոխեցին երկրագործութիւնը եւ զայն պիտի կերպարանափոխեն տակաւին մօտաւոր սպազայի մը մէջ։ Որքան ալ դանդաղութեամբ բարեփոխուին գիւղացիներու աւանդական աշխատութիւններու ձևերը, մենք իրենց սորվեցուցած ենք՝ նոյնչափ աշխատութեամբ եւ ծախքերով, արուարել տալ իրենց դաշտերուն բաղդատաբար խիստ մեծ քանակութեամբ ցորեն, քան ինչ որ կ'ստանային երբեմն. ու մենք տակաւին խիստ հեռու ենք այս մասին այն վերջական եզրակացութիւնէն զոր գիտութիւնը պիտի արտասանէ։ Գիտութիւններու ծաղկումին հետեւանքով է, որ գրեթէ բոլոր աշխարհ այսօր, այն ճերմակ հացէն կ'ուտէ, որ երբեմն ինչ ինչ առանձնաշնորհեալներու վերապահուած էր։ Այն կենդանիներու թիւը, զոր մենք կը մեծցնենք ու կը սնուցանենք մեր մարգագետիններու մէջ նուազ

համեմատութեամբ չէ որ անձած է երկու դարերէ իվեր, միշտ գիտութիւններու ստեղծած մեթոտներու կիրարկութեամբ: Գիմիական գիւտերու շնորհիւն է որ այսօր չաքարը՝ անցած դարու մէջ հազուագիւտ, կ'արտադրուի անագին քանակութեամբ եւ դարձած է ժողովուրդի միշտ գործածած սնունդներէն մին: Խիստ գիւրին է գիտութեամբ կեանքի պայմաններու բարելաւութեան թուարկութիւնը շարունակել:

Արդ, բոլոր այս առաջգիմութիւնները կը պարտինք, կը կրկնեմ միշտ, ոչ թէ վարդապետական եւ գրական ճառարօտութիւններու, այլ բնական, ուսողական եւ ֆիզիքական գիտութիւններու դրական գիւտերուն: Չեմ ուզեր խօսիլ միմիայն զուտ գործնական գիւտերու վրայ, որ կը ծնին փորձառութիւնէն, որովհետեւ անոնց մեծ եւ կարեւոր մասը կը յատկացուին դրական գիտութիւններու տեսական յղացումներուն: Այսպէս մետաղներու, քարի, փայտի ամեն տեսակ աշխատանքներու ճարտարագործութիւնը կը յենու քիմիայի եւ մեխանիքի ընդհանուր հայեցողութիւններու վրայ: Հաղորդակցութիւններու դիւրացումը անհուն ասպարէզներ բացած է առեւտուրի եւ արհեստներու. թոյլատրած է նաեւ հարստութեան եւ արտադրութիւններու համար ընդհանուր ծաւալում մը աշխարհի մէջ. բան մը որ կը նկրտի միեւնոյն ատեն առաջացնել գաղափարներու եւ մտաւոր ու բարոյական դաստիարակութեան ձուլում մը. գիտութիւններու հիմնական յատկանիշն է չվերաբերիլ յատկապէս ոչ մէկ աղանդի, ոչ մէկ ազգութեան, այլ կազմել մարդկութեան ընդհանուր իրաւասութեան սահմանները:

Աւելի որոշելու համար երկրագնտի հասոյթներու ընդհանրականութիւնը, որ կը ծագի յարաբերութեան միջոցներու բազմանալէն, յիշեցնենք որ արդի ֆիզիքական գիւտերու ինչպէս նաեւ շոգիի եւ ջերմութեան վրայ եղած տեսական օրէնքներով է, դարձեալ այրումի վրայ եւ երկաթի ու պողպատի պատրաստութեան համար եղած աշխատութիւններու հետեւանքով է եւ վերջապէս, տրամաբանական մեքենագիտութեան նաւերու եւ յառաջմղիչներու շինութեան վրայ կիրարկութեամբ է որ այդ օրինակ առաջգիմութիւններ կատարուած են:

Չեմ ուզեր խօսիլ, հոս, այն արտասովոր դիւրութիւններու վրայ, որ կենցաղի, արուեստի եւ ճարտարագործութեան տրուեցաւ արդի բնական գիտութիւններու հանձարեղ գիւտերով, ինչպէս ելեքտրական հեռագիրը, հեռախօսը, լուսանկարը, ելեքտրական լոյսը. ու միայն յիշեցնելու

համար պիտի ակնարկեմ այն հիմնական փոփոխութիւնը զոր կրեցին պատերազմի պայմանները պայթուցիկ նիւթերու յարաբերական գիւտերով, որ կ'ուսումնասիրուին տակաւին վերջերս ալ:

Բայց չեմ կարող լռութեամբ անցնիլ երկարակեցութեան վրայ, որուն տեւողութիւնը աւելցած է երկու դարերէ ի վեր քաղաքակիրթ ժողովուրդներու մէջ, բնախօսութեան, առողջապահութեան եւ բժշկութեան գիւտերու պատճառով. իւրաքանչիւր օր, այս շաւիղով, կը կատարուին նոր առաջգիմութիւններ ի ծափահարութիւն ընդհանուրին:

Այս բոլորը, կեանքի այս կերպարանափոխումը, վերջացած չեն տակաւին ու իրենց շարունակութիւնը գիպուածական չպիտի լինի. գիտական խորհողութեան հասունացած պտուղը պիտի լինի ատիկա: Ահաւասիկ թէ ինչու համար գիտութիւններու մեծ տեղ մը պէտք է տրուի հանրային դաստիարակութեան գործին մէջ. ու այս բանի օգուտը ընդհանրականութենէ առաջ անհատական է բնականաբար. որովհետեւ անհատը պիտի պատրաստուի գիտական զարգացումով մը, ու արհեստներու նոր ասպարէզին մէջ պիտի թեւակոխէ:

Գիտութիւնը միայն, արհեստական տեսակէտով՝ օգտակար պէտք չէ բնաւ դատել. պէտք չէ կարծել թէ անինքնին կարող չէ օգնել անհասին բարոյական եւ մտաւորական զարգացումին, եւ թէ չկրնար պատրաստել ո՛չ բարձր ըմբռնումներով օժտուած մտքեր եւ ոչ ալ լաւ քաղաքացիներ: Այս օրինակ դատապարտիչ վճիռ մը աւելի դիւրին է տալ գրական մշակումի մը վրայ հիմնուած՝ զուտ իմաստակեալ եւ հետտորական դաստիարակութեան մը դէմ: Թերեւս անօգուտ չլինէր, այս մասին քիչ մը մանրամասնութիւններու մէջ մտնել եւ ապացուցանել թէ ի՛նչպէս գիտութիւնը, գնահատելի չափով, ճշմարտապէս դաստիարակիչ է այնչափ մտաւորապէս ու բարոյապէս, որչափ նիւթապէս:

Այս կէտին մէջ, տարբեր ընդունակութիւններ աչքի առաջ ունենալով գիտական երկու ուղղութիւններ կան, որ իրարու հակասող չեն, այսինքն մաթէմատիքական ուղղութիւնը, բոլորովին տրամաբանական եւ հետեւողական. բնական եւ բնապատմական ուղղութիւնը, հիմնուած նկատողութեան եւ փորձառութեան վրայ՝ ձուլուելով տրամաբանութեան հետ: Երկուքն ալ անհրաժեշտ են մտքի լաւապէս մշակումին համար: Պղատոն արդէն դիտել կուտար որ

Թիւերու գիտութիւնը, պարտաւորցնելով մարդը, որ ինքնին տրամաբանէ թիւերու եւ ճշմարտութիւններու վրայ որ ոչ տեսանելի են եւ ոչ շօշափելի, հոգին ազնուացնելու առաքինութիւնն ունի: Ուսողական գիտութիւնները (մատէմատիք) ճշմարտութիւններ ապացուցանելու պայծառ ծանօթութիւնը կուտան երիտասարդին, ինչպէս նաեւ երկարօրէն իրարու յաջորդող եւ թուաբանօրէն իրարու շրջափակած եւ վերջնական արդիւնքին անվերապելիութեամբ ամրապնդուած, գաղափարներու եւ խորհրդածութիւններու ունակութիւնը: Նոյն իսկ ըսուած է թէ ով որ երկրաչափութիւնէ լուր չունի՝ ստուգութեան շեղակ զգացումը չունի: Զուտ բարոյական տեսակէտով՝ ոչինչ աւելի յարմար է քան այսպիսի ծանօթութիւն մը մարդուն ներշնչելու բացարձակ եւ մոլի յարգանք դէպի ճշմարիտը:

Մատէմատիք գիտութիւնները խիստ կը զօրացնեն նշաններու եւ խորհրդանշաններու ըմբռնողութիւնը, որոնք մարդկային մաքի կարողութեան եւ հասողութեան զարգանալուն անհրաժեշտ գործիներն են, համառօտելով խտացած ձեւով մը, եւ գրեթէ մեքենաբար, յարաբերութիւններու խոշոր ամբողջութիւն մը. այսպիսի օժանդակներ մանաւանդ մատէմատիք գիտութիւններու մէջ թանկագին են, որովհետեւ իրենց սահմանումներուն (definitions) համահաւասար են. յասկանիչ մը՝ զոր աստոնք չունին, միեւնոյն աստիճանով, բնական եւ բնապատմական գիտութիւններու մէջ: Ինչ որ ալ լինի, այդ ուղղութեան մէջ կայ ամբողջութիւն մը կարողութիւններու՝ որ միայն մատէմատիքական կրթութեամբ կարելի է մշակել. անոնց կատարելագործումը աւելի եւս մեծ պիտի լինէր, եթէ այդ կրթութեան այնպիսի մեթոտ մը տրուէր որ աչակերտը կարենար իր անձնական աշխատութեան ազատ թռիչ մը տալ. փոխանակ զայն ստիպելու որ մանրագին եւ նախօրօք գծուած պարտաւորիչ մրցողական դրութեան մը շրջանակներու մէջ մտնէ:

Մատէմատիքական գիտութիւնը ֆիզիքական գիտութեան խուլարկումներու անհրաժեշտ գործին է: Բայց ֆիզիքական գիտութիւնը տարբեր մեթոտներու վրայ կը յենու, որոնց կարգապահութիւնը կը գործակցի, մասնաւոր եղանակով մը՝ տղուն զաստիարակութիւնն ու անոր մէջ կը զարգացնէ ոչ նուազ կարեւոր կարողութիւններ, ինչպէս մտաւորական նոյնպէս բարոյական կրկին տեսակէտներով:

Կ'ուզեմ խօսիլ դիտելու եւ փորձառական կարողութիւններու վրայ: Իրօք, աստոնց նպատակն է բնութեան հետ

ծանօթանալը . բան մը՝ որ, հակառակ երկրաչափութեան , չէ կարելի ձեռք բերել արամաբանօրէն : Մենք ճշմարտութեան մը գերիններն ենք, որ մեզմէ դուրս է, եւ զոր կրնանք ճանչնալ միայն գիտելով : Այստեղ իրերու վրայ կրթութեան մը պէտքը նախագալի կը լինի, որ կարելի է եւ պէտք է արուի ծաղիկ հասակէն : Գիտական դաստիարակութեան այս հայեցողութեամբ՝ բնապատմութեան դասաւանդութիւնները մանաւանդ՝ կարեւոր են կրթութեան առաջին տարիներուն մէջ : Ոչինչ այնքան թելադրիչ է, այնքան սեպական՝ իրերու ծանօթութեան ճաշակը եւ իրենց բաղադրութեան զգացումը զարգացնելու , որքան բուսաբանութեան եւ կենդանաբանութեան ուսումը : Տղաք կանուխէն հաւաքածոներ ընելու քմահաճոյք մ'ունին, ու կազմաբանական սկզբունքներու ծանօթութիւնները, որ այնքան օգտակար են գիտութեան եւ արուեստի կատարելագործումին, կը թափանցեն այսպէս, անզգայաբար եւ առանց ճիգի, այդ դեռատի մտքերուն մէջ : Կ'ստանան միեւնոյն ատեն դասակարգութեան ընդհանուր գիտակցութիւնը, որ այնքան մեծ դեր կը խաղայ մարդոց բոլոր ծանօթութիւններու մէջ, ինչպէս նաեւ տակաւին այն գիտակցութիւնը որով կենդանի էակներու կազմաբանական եւ գործարանաւորական դրութիւնները ներդաշնակօրէն ձուլուած են : Փափուկ գեղեցկագիտական զգացում մը կը սպրդի այսպէս, իրենց իմացականութեան մէջ տակաւ առ տակաւ :

Բայց որպէսզի բնապատմական գիտութիւններու բոլոր տարրերը ունենան իրենց դաստիարակիչ նկարագիրը, հարկաւոր է որ չներկայացուին տղայոց՝ համրանքի մը ցամաք ձեւին տակ, գոց սովորուած ինչպէս տեսակ մը սաղմոսերգութիւն . բան մը՝ որ իրենց զգուանքը պիտի գրգռէ դէպի գիտութիւնները, որոնք ընդհակառակը խիստ շահագրգռիչ եւ ախորժելի են : Հարկ է որ բնական գիտութիւններու կրթութիւնը յենու իրերու երեւոյթներու վրայ մանաւանդ :

Բուն փորձառական գիտութիւններու ուսումը, ինչպէս քիմիան եւ ֆիզիքը (բնագիտութիւն), պէտք է յետոյ գայ . ու կարելի չէ զայն տղուն աւանդել պատանեկութեան տարիքէն առաջ : Այս կրթութիւնը երբ յարմար կերպով մը տրուի, երիտասարդին իմացականութիւնը կազմելու ու բարոյականը ամենաբարձր աստիճաններու մէջ զօրացնելու առաքելութիւնն ունի . որովհետեւ կը մատակարարէ միեւնոյն ատեն դրական ճշմարտութեան վճիտ ու մաքուր

— դիտողութեամբ հաստատուած եղելութեան ծանօթութիւնը, — եւ բնութեան աւելի ընդհանուր օրէնքին գիտակցութիւնը, այսինքն մասնաւոր իրողութիւններու յարաբերութիւնները ճանչցուած եւ որոշուած՝ ոչ թէ տրամաբանօրէն այլ դիտելով ու տեսնելով: Ըշմարտութիւնը ընդ առաջ կը դրուի այսպէս, պատճառաբանական անբաժեկտութեան մը անոգորելի ուժով, բոլորովին անկախ մեր փափաքէն եւ կամքէն: Ոչինչ աւելի զօրաւոր է, քան այս հաստատոււմը տալու մտքին այն համեստութիւնը, այն լրջութիւնը, այն կորովը եւ համոզումի այն պայծառութիւնը որոնք զայն խիստ բարձր կը կացուցանեն ունայնութեան կամ անձնական շահու թելադրումներէն, եւ որոնք սեղծօրէն կապուած են նոյնիսկ պարտականութեան ըմբռնումին հետ: Իրերու վրայ խորհրդածելու եւ տրամաբանելու սովորութիւնը, ճշմարտութեան անդրդուելի յարգանքը ինչպէս նաեւ իրերու անհրաժեշտ օրէնքներու առջեւ խոնարհելու պարտականութիւնը, կը հաղորդեն մտքին անեղծելի գրոշմ մը: Կը վարժեցնեն յարգել ընկերութեան ինչպէս նաեւ բնութեան օրէնքները, եւ ըմբռնել իրաւունքը ու զայն յարգել, իբրեւ իր սեպհական իրաւունքն ու անձնական անկախութիւնը:

Գիտութիւնը մարդկութեան մտաւոր դաստիարակութեան մէջ մանաւանդ կը խաղայ գլխաւոր դեր մը: Փիղիքական օրէնքներու ծանօթութեամբ է որ գիտութիւնը, երկու դարէ ի վեր, վերանորոգած է աշխարհի դաւանանքը եւ յղացումները, ու անհետ առեւտարած է հրաշքի եւ գերբնականութեան գաղափարները: Գիտութիւնը ոչ միայն նպատակ ունի օգտակար անհատներ պատրաստելու, այլեւ առանց նախապաշարումի եւ երբեմնի աւելորդապաշտութիւններէ զերծ քաղաքացիներ: Անոնց կը սովորեցնէ թէ ինչպէս պէտք է բնութեան ճակատագրական ոյժերու դէմ մաքառել, ոչ թէ հրաշագործ երեւակայութեամբ, այլ աշխատանքով եւ հաստատ կամքով, յենած նոյն իսկ բնական օրէնքներու գիտակցութեան եւ ուղղութեան վրայ: Այսպէս գիտութիւնը կը կազմէ ազատ, կորովի եւ գիտակից մտքեր՝ աւելի մեծ ուժգնութեամբ, քան հոետորական եւ գրական դաստիարակութիւնը: Երբ գիտական դաստիարակութիւնը արտադրէ բոլոր այս արդիւնքները, քաղաքականութիւնը ինքնին անով պիտի կերպարանափոխուի, ինչ որ ճարտարագործութիւնը կրած է այնքան խորունկ կերպով: Մին թէ միւսը պիտի լինի փորձառական:

Հոս, երկու գաղափարներ կը շօշափենք, — դիտելը կամ դիտուլութիւնը եւ փորձառութիւնը կ'առաջնորդեն իրերու օրէնքներու հանդիպումին՝ այլեւ միեւնոյն ատեն անոնք կուտան ընտելեան տիրելու կարողութիւն մը: Արդ, ատկէ երիտասարդութիւնը մանաւանդ կրնայ հրապուրուիլ եւ մղուիլ անյաղթելի աւելնով մը, ճշմարտապէս գիտական դաստիարակութեան մը մէջ: Իշխել բարոյական եւ նիւթական չարիքներուն, ինչպէս ճարտարագործութեան նոյնպէս տնտեսութեան մէջ. մաքառիլ նուազեցնելու համար չարչարանքը, աղքատութիւնը եւ թշուառութիւնը ամեն դասակարգերու մէջ. կուռիլ իրերու կայուն օրէնքներու օգնութեամբ, այս էր տասնհուսկերորդ դարու փիլիսոփաներու բարձր նպատակը, զոր ներկայ դարու դաստիարակութիւնը պէտք է նախընտրէ իր կարգին, այդպէս գիտութիւնը պիտի լինի լիովին դաստիարակիչ:

Գիտական դաստիարակութիւնը, ունի իր մասնաւոր առաքինութիւնը. ուրեմն, իր յատկանիշին արդիւնքներուն խորապէս անձանօթութեամբ է որ յաւակնոտութիւնն ունեցած են վերապահել գրական դաստիարակութեան մը մտքի կատարեալ զարգացումի իրաւասութիւնը, ուրիշ խօսքով մոնոփոլը: Հոս տեղը չէ քննել թէ՛ իմաստասիրական ուսումները, որ կը կազմեն գրական դաստիարակութեան պակասը, չեն կոչուած, եւ թերեւս աւելի լաւապէս ճշտուած աստիճանով մը, կազմելու գիտական դաստիարակութեան պակասը: Չեմ կարծեր, իրաւամբ, որ դաստիարակութիւնը կատարեալ լինի, եթէ երիտասարդին միտքը չունի ուսումներու մէջ ընդհանուր ընդունակութիւն մը, կարենալ մինչեւ այդ աստիճանը ուսուցուած մասնաւոր ծանօթութիւններու ամբողջութիւնը կարգաւորելու եւ մարտելու: Շատ ըսուելիքներ կրնային ըլլալ այս մասին, մանաւանդ այն մեթոտին տեսակէտով որով գիտութիւնը կ'առաջնորդէ այս ընդհանուր եւ քնազանցական (մէթաֆիզիք) յղացումներուն: —

Հոս, Մ. Պէրթըլօ կ'ամփոփէ իր յօդուածը. կը պնդէ իրաւամբ թէ գրական դաստիարակութիւնը, միայնակ անկարող է ներկայ դարու պահանջած կատարեալ մարդուն մէջ զարգացնելու. ու դիտել կուտայ թէ գրական դաստիարակութեան ամենէ վառվռուն պաշտպաններն իսկ ընդունած են գոնէ տարրական մշակում մը: Ու այս փոքրիկ քայլը, անտարակոյս, այն պատճառով է որ անոնք ալ

կ'ըմբռնեն հետզհետէ՝ թէ ոչ ոք պէտք է անտարբեր մնայ դէպի գիտութիւնները, ինչ ընելու ալ կոչուած լինի արդի ընկերական կեանքի մէջ: Կը պահանջէ որ հին լեզուները ֆրանս. երկրորդական կրթութեան մէջ այլեւս չուսուցուին ու աւելի ոյժ տրուի կենդանի լեզուներու, որոնք համապատասխան են ներկայ պահանջումներուն: Ու, միշտ իրաւունքն իրեն հետ, ապացուցանելէ յետոյ թէ արդի մարդկութիւնը չապրիր ո՛չ գրականութեամբ եւ ոչ ալ գեղեցկագիտութեամբ, այլ ճարտարագործութեամբ, կ'առաջարկէ որ գիտական ուսումները գրականութեան հետ զուգահեռաբար ուսուցանելու ուղղութիւն մ'ունենան վարժարանները: Բոլորովին հակառակ հին ըմբռնումներուն, գրականութիւնը գիտութեան ստորադասեալը կ'ընդունի, վերջացնելով սապէս. « Զուգահեռական եւ միեւնոյն առանձնաշնորհումներով օժտուած երկու կրթութիւններ՝ մին հիմնուած միայն նախնի գրականութեան վրայ՝ բայց գիտական զարգացումով մը. միւսը հիմնուած միայն գիտութիւններու վրայ՝ բայց արդի գրականութեան զարգացումով մը. ահա մեր ժամանակի յարմար ինձ փափաքելի երեւցած ուղղութիւնը, որուն պիտի հետեւինք արդէն՝ իրերու կոչոյ ոյժին բերումովը: »

ՆՇԱՆ

---

 ՄԻՍՍԻ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ
 

---

## ԳՐԱԿԱՆ ԷՋԵՐ

Ա.

Ակնարկ մը ֆրանսերէն Լեզուի եւ Գրականութեան վրայ:

Ժողովուրդները կը յեղաշրջուին, իրենց բարքերը կը փոխուին, ընկերական հին կարգերը հետզհետէ կ'անհետին ու նորեր՝ բոլորովին տարբեր՝ անոնց կը յաջորդեն: Չէ եղած ժողովուրդ մը՝ ազգ մը՝ ընկերութիւն մը որ իր

նախապատմական վարքին ու բարքին, կառավարական վարչութեան եւ սովորութիւններու՝ մի անգամ ընդ միշտ սահմանուած շրջանակներուն մէջ մնայ: Ժամանակին հետ՝ ընկերութիւններու այս բարեշրջումն ու յեղաշրջումը՝ եթէ պատմութիւնը մեզ չտեղեկացնէր, մեր փնտոտութիւն մէջ չպիտի անճրկէինք, թէ եւ անուղղակի, եթէ դիմէինք ուրիշ ազդարար նշանի մը, որ կը պատկերացնէ հեռացող դարերու մէջ ապրող ժողովուրդներու ձգտումներն ու զգացումները: Նշան մը՝ որուն լուսածիզ ասեղը՝ զայն լարող տարրին բուր շղաձգումները, երբեմն ընդոտտ, երբեմն տկար փոփոխումներով գծած է՝ իր անդրադարձնող հայելիին մէջ: Ընկերութիւններու արտայայտիչ այս նշանն է անոնց լեզուն իր գրականութեան հետ:

Ֆրանսերէն լեզուն՝ տասնեւիններորդ դարու մէջ, կրեց իր գրականութեան հետ՝ բացարձակապէս այն հակահարուածը զոր ընկերութիւնը, ինքը, նախապէս ստացաւ, ինչպէս նաեւ այն յեղաշրջումը՝ ուրկէ այս վերջինը դարձեալ կանխաւ տնցած էր: Վերածնութենէն սկսած՝ ֆրանսերէն լեզուն այնպէս վերիվայր տատանեցաւ որ իր պատմութիւնը բոլորովին տարբեր կերպարանք ստացաւ: Գրական ըմբռնումները, ճշմարիտ արտայայտութիւնները ժամանակակից ժողովուրդներու ձգտումներուն, զգացումներուն եւ կեանքի հանգամանքներու պահանջումներուն, իրենց անվիճելի ազդեցութեան տակ առին լեզուն եւ իր քերականութիւնը. հակառակ այս վերջինին ըմբոստացումներուն, որով խիստ գէշ կերպով կը դատափետէր վերածնող լեզուին առոյգ եւ արապ կերպարանափոխումը:

Վիքթոր Հիւկօ, գիտակ իր դերին, ու զայն կատարելու խղճամիտ, երբ մի անգամ ընդունեց թէ գրականութիւնը պէտք էր լեզուին օգնէր զայն կազմելու կազմակերպելու համար, իր բոլոր ուժովն այդ նպատակի կատարումին փարեցաւ: Լամարթին թէ եւ միեւնոյն դպրոցին պատկանող մը, միեւնոյն շաւիղով ընթանալու տրամագիւր մը, սակայն չունեցաւ ոչ Հիւկօյի հաստատակամութիւնը եւ ոչ ալ անոր հաւասար գիտակցութիւն գէպի գործը. աւելի

Թողուլ անցնելու անստոյգ եւ խարխուլ սկզբունքին հետեւեցաւ : Տասնեւիններորդ դարը սակայն , զուտ տրամաբանութեան շրջանն եղաւ . ու պէտք էր յեղաշրջում մը , որ պէսզի փրկէր լեզուն որ կը նկրտէր միշտ անհեթեթութիւններ իւրացնել : սովորութեան եւ աւանդամոլ դործածութեան դիւրարեկութեան վրայ հիմնուած : Ու հաստատուն կամքով օժտուած գրագէտներ պէտք էին , որ զտէին ու հոռիս լեզուն . որպէսզի քերականն ալ իր կարգին հետեւէր անոնց մեքենաբար եւ ոչ թէ անոնց դէմ հետեւէր : Ասիկա անհրաժեշտ էր :

Վ. Հիւկօ հակառակ որ իրեն դէմ ունեցաւ ժամանակին բոլոր գրական պետերը . սակայն ան կոչուած էր յաղթանակելու , որովհետեւ իրեն հետ ունէր ճշմարտութիւնը . ու իրաւամբ անիկա յաջողեցաւ դնել լեզուն այն տեսակ շաւիղի մը մէջ , որ անոր երիտասարդութիւն ու կենդանութիւն տուաւ . ուրկէ յաղթական կերպով պիտի ընթանային իր յաջորդները : Ուրեմն Վ. Հիւկօ մաքրեց , կոկեց հին լեզուն , լաւն առաւ , ու անպէտք թողուց , եւ իր դժուար պայքարին մէջ թէեւ չստեղծեց՝ սակայն տուաւ ամէն հարկաւոր ներշնչումները , իրեն հետեւողներուն՝ ստեղծելու համար :

Նա կամեցաւ տապալելու մօտեցող լեզուն վերահաստատել , դնելով զայն այն հիմին ու դիրքին վրայ , որուն կարօտ էր՝ ապրելու համար :

Վիպական գրականութիւն մը՝ օրէ օր ծնող եւ բողբոջող՝ լեզուին տուաւ իր ազատութիւնը , փոխանակելով ժողովրդական բառը՝ ազնուականին հետ : Դարձեալ տուաւ գրագէտին անհատական ազատութիւն մը , հետեւաբար լեզուական անհատականութիւն մը : Իրականութիւնն է լեզուին պահպանիչը . ճշմարիտ գրականութիւնը ծնելով իրականութենէն այդ բանին մեծապէս կը սատարէ : Ֆլօպէտ , ռեպլիս պատմաբանը , զայս ապացուցուց առաջինը լինելով : Որքան տկար պիտի մնան հապա անոնք որ կ'ուզեն հին լեզուն վերակենդանացնել . առանց լեզուն փնտոելու իր բուն վիճակին մէջ :

Մոլիեռի, Քոռնէյլի, Ռասինի եւն. լեզուն ընդհանրացնել անկարելի է, այն պատճառով որ ան իր նուիրական եւ անբիծ (chasteté) խանձարուրին մէջ՝ ծնած էր նպատակոր պայմաններու տակ՝ այնքան ժամանակի որքան միջավայրի ու ըմբռնումներու կրկին տեսակէտներով : Բայց երբ իրականն ընդզգեցաւ վերացականին՝ երեւակայականին դէմ. երբ զուտ արամաբանական եւ գիտական շրջանը իր բնական գնացքն սկսաւ. լեզուն պէտք էր համակերպեր անոր, ու փոխանակ սուրբ եւ անբիծ երեւոյթի մը՝ իրերու դրական շաւիղին մէջ մտնէր :

Ֆրանսերէն լեզուի վրայ՝ տասնեւիններորդ դարու մէջ գրականութեան ազդեցութիւնը բազմաառաքար այնքան մեծ չեղաւ՝ որքան ուրիշ աւելի զօրաւոր ազդալիններու այդ տեսակէտով՝ միջամտութիւնը : Գիտութիւններու արագընդոսա զարգացումով մը, գիւտերու օրըստօրէական յաջորդութեամբ մը լեզուն իր մէջ ամբարեց բառերու պատկանելի թիւ մը : Պատերազմներու շարք մը հոն ոչ նուազ կարեւոր նորամուտութեան սատարիչ դեր կատարեց. որովհետեւ լեզու մը աւելի կ'ստանայ պատերազմներէն քան թէ խաղաղութենէն : Երբ մէկ կողմէ գիտական բառերը՝ առօրեայ կեանքի բերումով լեզուին մէջ կ'սպրդէին. միւս կողմէ քաղաքական նոր վիճակի մը յառաջացումը՝ իրերու բնական եւ անխուսափելի բերումով, ազնուապետական եւ հանրապետական լեզուներու երկու զատուած բեկորներուն իրարու ձուլուելուն օգնեց : Արտաքին յարաբերութիւններու ճամբով, օտար բառեր լեզուին մէջ մտան, հակառակ քերականագէտին պոռոք պուչուտութիւն ընդհանուր անտարբերութեան մը մէջ՝ հոն արմատ դրին եւ քաղաքացիութիւն ստացան :

Լեզուն իր քերականութեամբ փոխուեցաւ եւ սեպհական դարձաւ այն ընկերութեան արտայայտութիւններուն, որուն կը պատկանէր. ու այս բանը անխուսափելի էր :

\*  
\*  
\*

Գրականութիւնն ալ միեւնոյն շրջանէն պէտք էր որ

անցնէր, ու նախօրօք. ասիկա բնական էր՝ քանի որ առանց անոր լեզուն լաւապէս չպիտի յեղաշրջուէր. իրաւամբ իրերու կանոնաւոր ընթացքը, իրենց համերաշխութեան մէջ, հոս ալ հաստատուեցաւ:

Ֆրանսական գրականութիւնը կրեց այն ամեն բարեփոխումները, զոր Ֆրանսան ինքը կրեց. այն գաղափարներու եւ զգացումներու տպաւորութիւնը՝ որով մայր երկիրը տոգորուեցաւ. այն մեծ անցքերու ազդեցութիւնը՝ որուն Գաղղիան թատր հանդիսացաւ: Ճշմարիտ է որ քանի մը դպրոցներ իրենց գլխաւոր զբաղումն ըրին զերծ մնալ՝ միջավայրի ծնունդ տուած կերպարանափոխումներու ազդեցութենէն, ուրանալ իրենց ժամանակակիցները եւ ծայրայեղութեան տանիլ արուեստը արուեստին համար լինելու տեսութիւնը, բայց ոչ մի գործնական արգիւնքի հասան այսպիսիները. որովհետեւ ամբողջ զանոնք կ'անդիտանար. ամբողջ՝ որ կը սիրէ միշտ շահագրգռուիլ անոնցմով որ իրմով կ'զբաղին. ու այդ գաղափարին պատկանող գրագէտները աննշան տեղ մը բռնելու կոչուեցան՝ Ֆրանսայի գրականութեան ժամանակակից պատմութեան մէջ: Հեռացող դարուն ամենէ մեծ հեղինակները միայն անոնք եղան, որ արգարացուցին իրենց անձին մէջ Փասկալի սանշանաւոր խօսքը. «Կը կարծէինք միայն հեղինակ մը գրտնել, եւ կը հիանայինք մարդու մը հանդիպելով— On croyait ne trouver qu'un auteur et l'on est ravi de rencontrer un homme—:» Ու իրաւամբ Ֆրանսայի հանրապետութեան ժամանակակից մեծ գրագէտները, որոնք գիտելով միայն հիւսեցին իրենց գործերը, զիրենք չըջապատող միջավայրէն առին, իրենց հեղինակած գործերու անձնաւորութիւնները, զանոնք հանճարի մուրձին տակ կերպարանափոխելով. կրգեցին հայրենիքի դժբաղդութիւնները եւ խորին գութցոյց տուին դէպի փոքրերը եւ տկարները. վերջապէս իրենց մէջ խօսեցաւ մարդը, գործեց մարդը, եւ ոչ արուեստակեալ տեսութիւնը:

# Պ Ղ Ի Ն Ձ Ը

պատասխան  
ԿԵՈՐԳ ՄԿՐՏԻՉԵԱՆ

I

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Պղինձը եւ իր գլխաւոր երկու խառնուրդները (alliages),  
— ա. անագին հետ՝ անագապղինձ (bronze), բ. զինկին հետ՝  
արոյր (laiton)— ծանօթ եղած են ամենահին ժամանակներէ  
ի վեր:

Պղինձը, անտարակոյս, մարդուն գաած առաջին մետաղն  
եղաւ՝ իր բնածին (natif) վիճակին մէջ. վիճակ մը՝ ուր  
ան ունենալով տեսակ մը փայլուն եւ կարմիր քարի տեսք  
եւ հարուածի տակ զանգուելու (se pétrir) յատկութիւն,  
անոր ուշադրութիւնն իր վրայ հրաւիրեց: Բայց պղինձը  
լինելով չափազանց կակուղ եւ քիչ դիմացկուն՝ իր տարրա-  
կան յատկութիւններով, աշխատաւորին մեծ ծառայութիւն  
մը չպիտի մատուցանէր, եթէ իրեն պէտք եղած դիմաց-  
կունութիւնն ու կարծրութիւնը տալու միջոցը չգտնուէր.  
ինչ որ ձեռք բերուեցաւ զայն ձուլելով կամ խառնելով  
անագին եւ զինկին հետ: Խառնուրդ մը որ ինքնին ոչ մի-  
այն դիւրահալ էր, եւ բնականաբար դիւրաւ կաղապարելի,  
այլ եւ անով շինուած հատու գործիները տեւական սրու-  
թեամբ մը օժտուած էին:

Չինաստան, Քաղղէաստան եւ Եգիպտոս այն երկիրներն  
են, ուր մետաղներու ծանօթութիւնը կը հասնի խիստ հե-  
ռացած թուականներու: Չինացիներու Շու Քինկը (Քրիս-  
տոսէ 2200—1000 տարի առաջ տիրապետող հարստութեան  
պատմութիւնը) կը յիշատակէ պղինձին եւ անագին առա-  
տուութիւնը: Սեաներու եւ Շանկերու տիրապետութեան ժա-  
մանակ, պղինձը արդէն իբր դրամ կը ծառայէր:

Հնդիկներն առաջին անգամ ճանչցան թէ անագապղին-  
ձը, որ շատ դիւրաբեկ է դեռ նոր թափուած ատենը, կրնայ  
կռանելի (malléable) ըլլալ, եթէ կեռասի կարմրութեան

տարուելէ յետոյ յանկարծ պաղ ջուրին մէջ մխուրի: Այս մխուժը (ջուր տալ—trempe) պողպատի մխուժէն բոլորովին տարբեր արդիւնք առաջ կը բերէ. ու քիչ յետոյ, յաջողեցան թրծումի (recuit) միջոցաւ անագապղինձին կարծրութեան յատկութիւնն ալ տալ հեռի բոլորովին դիւրաբեկութեանէ. թրծում՝ որ ուրիշ բան չէ բայց եթէ բարձր բարեխառնութեան մը տարուած անագապղինձին աստիճանաւոր պաղիլը: Այս կարեւոր գիւտէն վերջ միայն անագապղինձը երկաթին տեղը բռնեց, օգտակար կերպով, կայծքարին եւ նոյն իսկ պղինձին ամեն տեսակ շէնքերու շինութեան համար ինչպէս նաեւ արհեստական գործիքներու պատրաստութեան մէջ: Դանակներու եւ սուրերու շեղբերը թափուեցան (couler) ու միայն զանոնք հատու ընելու նպատակով էր որ ողորկ քարէ մուրճը միջամտեց:

Եփրատի եւ Նեղոսի հովիտներուն մէջ գանուեցան անագապղինձէ զէնքեր եւ կահեր (ustensiles), մնացած քաղաքակրթութեան նախկին ժամանակներէ: Եգիպտոսի մէջ, բուրգերէն մեծագոյնին ժամանակակից դամբաններ(Ք. ա. 40 դար) անագապղինձէ առարկաներ կը պարունակէին: Աւագաքարէ եւ կրաքարէ հին յիշատակարաններու(աւելի հին քան բուրգերը) քանդակագործութիւնը ենթադրել կուտայ քանդակելու սեպհական գործիքներու գոյութիւնը, այսինքն անագապղինձին գոյութիւնը: Հաւանական է որ Եգիպտացիք հատաքարի (կրանիթ) քանդակն սկսան երկաթի գիւտէն վերջ:

Անոնք կը շահագործէին մեր թուականէն 4000 տարիներ առաջ Սինա լեռներու շղթային պղինձի բազմաթիւ հանքերը. ինչ որ ցոյց կուտան Վատի—Մաղարայի մէջ գտնուած հետքեր, շրջապատուած հալարան—ձուլարանի աւերակներով: Մեհենագրոշմ արձանագրութիւններ անհերքելի ապացոյցներ են այդ հանքերու արդիւնաբեր շահագործութեան, Բուֆու (Kofou) մեծ բուրգը շինող Փարաւոնին օրովը:

Եգիպտոսէն ելլելէ յետոյ, Հրեաները կը ճանչնային բնականաբար անագապղինձը, որմէ մաս մը կորզեցին

Եգիպտացիներէն եւ վերջը, Սինայի հանքերը իւրացուցին : Անագապղինձը Յորբի գրքին մէջ ալ յիշատակուած է : Մովսէս իր վկայութեան խորանին շինութեան համար իբր 3000 քիլօ անագապղինձ պահանջեց Իսրայելացիներէն : Թագաւորաց գրքին մէջ կը գտնենք՝ Ասերի ցեղը, որ կարմեղոս լեռան մօտ կը բնակէր, մետաղագործութեամբ զբաղեցաւ : Անշուշտ ատոր պատճառներն եղան Փիւնիկէի մերձաւորութիւնը, ուր այդ արհեստը շատ առաջ զացած էր, ինչպէս նաեւ Լիբանան եւ կարմեղոս լեռներու մօտիկութիւնը, ուր կը գտնուէին թէ հանածոն եւ թէ վառելանիւթը :

Անագապղինձին պատրաստութիւնը կ'ենթադրէ անագին ծանօթութիւնը. եւ որովհետեւ այս վերջինը ո՛չ Եգիպտոս եւ ոչ ալ Փիւնիկէ կը գտնուէր վաճառականութիւնն ու առեւտուրը զայն հոն կը տանէին : Անագը նախ ցամաքին ճամբով՝ Հնդկաստանէն եկաւ՝ անցնելով Մարաստանէն, Քաղդէաստանէն եւ Միջագետքէն . յետոյ կովկասէն՝ Հայաստանի, Եփրատի եւ Սիւրիայի ճամբով : Աւելի վերջը, այսինքն մեր թուականէն իբր քսան դար առաջ, անագի փոխանակութիւնը ծովու ճամբան բռնեց : Փարաւոններու նաւերը Սիդոնցի նաւորդներէն առաջնորդուած՝ ու յետոյ Սողոմոնի նաւերը Տիւրացիներէ՝ քերեցին Արաբիայի ծովափերը եւ հասան Ինդոսի գետաբերանը, այն երկիրը զոր Ս. Գիւրջը Ոփիր կամ Սոփեր\* կը կոչէ եւ զոր Յոյները Syrastrème (սիրասթրէմ) կ'անուանէին, որ է այժմու Կիւզարաթի գաւառը :

Գիտնականներէ Սաւուայի մէջ կատարուած խուզարկութիւններ երեւան բերին մեծաքանակ պատմական անագապղինձէ կացիներ, ապարանջաններ, ասեղներ, մանեակներ, գամեր, եւն. ինչպէս Պուրժէ (Bourget) լիճին ու

\* Հայկական Հնախօսութեան վերապատուելի հեղինակը Մովսէս գաւառին մէջ կը գնէ զայն : Իր կարծիքով Սողոմոնի նաւերը Պարսից ծոցէն Եփրատի ալիքները պատուելով՝ կ'երթային դէպի հրւսիս՝ ոսկի եւ ուրիշ ազնիւ մետաղներ բերելու համար :

Annecyի մօտ Menthonի մէջ գտնուած ձուլիչներու թաքստոցի մը մէջ :

Զուիցերիայի Նէօշաթէլ եւ Պիէն (Bienne) լիճերուն մէջ կատարուած աւելի նոր խուղարկութիւններ լոյս բերին մանաւանդ պղինձի դարաշրջանին պատկանող 2000է աւելի առարկաներ : Ուրեմն լճաբնակ մարդկութիւնը կը վայելէր տեսակ մը գիւրակեցութիւն իր լճափէն հեռու ցիցերու վրայ կառուցուած հիւղակներու մէջ\* :

Լճային քաղաքներէ ոչ շատ հեռու ձուլարաններու հետքեր գտնուեցան : Կրացեալ (calciné) գետինի մը շուրջը գործիքներու, կաղապարներու եւ անագապղինձէ առարկաներու գիւտը անժխտելի ապացոյց մ'է այս նախնական գործարաններու (usines) գոյութեան :

---

\* Յայտնի է թէ Քարի դարաշրջանին մէջ մարդիկ վայրի գաղաններու դէմ անձնապաշտպանութեան ուրիշ միջոց չունենալով իրենց բնակութիւնը կը հաստատէին լիճերու վրայ՝ ցիցերով շինուած հիւղակներու մէջ : Այդ հիւղակներ կամրջակներով իրարու հետ կը հաղորդակցէին եւ մեծ կամուրջով մ'ալ ցամաքին հետ : Սափուայի եւ Զուիցերիայի շատ մը լիճերուն մէջ այս տեսակ լճային քաղաքներ կամ գիւղեր շատ կը գտնուէին :

ԳՐՈՒԹՅԱՆ ԲՈՅՐԸ

Չորս սեւապս մովի յոյսին սակ աղօս,  
Գիշե՛ր մ'աւբողջ հրակած է նա ծընւադիր՝  
Նընջեցեալի մահասարսուռ մահճին մօս,  
Անոր հաւար աղօթելով անձանձիր,  
Չորս սեւապս մովի յոյսին սակ աղօս...

Գիշե՛ր մ'աւբողջ հրակած է նա ծընւադիր՝  
Անշունչ դիա՛կ մ'ունենալով յոկ ընկեր...  
Եւ խորասոյգ խորհուրդներու մէջ անձիր  
Ու անզգայ՝ քի թրւում եւ իր ծընկեր,  
Գիշե՛ր մ'աւբողջ հրակած է նա ծընւադիր...

Նընջեցեալի մահասարսուռ մահճին մօս՝  
Խընկաւաններն առաս խունկով կը մըխան,  
Տարածելով սենեակին մէջ՝ մահահոս  
Բոյր մ'ըզգըխիւիջ... մինչ կը հրակէ նա անձայն՝  
Նընջեցեալի մահասարսուռ մահճին մօս...

Անոր հաւար աղօթելով անձանձիր,  
Անոր՝ որուն կեսնքն անծանօթ է իրեն,  
Կարծես քի նա ըստիմանքով մ'երկնաձիր  
Ա՛յ կը մոռնայ իր հոռօխնն հաւօրեն,  
Անոր հաւար աղօթելով անձանձիր...

Չորս սեւապս մովի յոյսին սակ աղօս,  
Լուսաբացին, դիաբաղներն երբ կուզան,  
Արձանացած կը գրկեն հոն, մահճին մօս,  
Գրքուքեան ֆոյրն՝ որ կ'աղօթէ դէռ անձայն,  
Չորս սեւապս մովի յոյսին սակ աղօս...

ՀՐՈՒՇԱՆ

# Ֆ Ր Ա Ն Ս Ա Յ Ի

## Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Վ Ա Ր Թ Ա Ր Ա Ն Ն Ե Ր Ը

Նպասակ. — Այս վարժարաններու նպատակն է պատրաստել կարող առեւտրականներ, պաշտօնեաներ, վաճառականներ եւ վարչական անձեր որ կարենան վարել. ա) առեւտրական, ճարտարագիտական եւ սեղանաւորական գործեր, բ) պահպանել եւ զարգացնել Ֆրանսայի առեւտրական յարաբերութիւնները օտար երկիրներու հետ եւ գ) ներկայացնել պէտք եղածին պէս՝ իբր հիւպատոսական գործիչներ Ֆրանսան միջազգային առեւտրական խնդիրներու մէջ:

Ու ունենալու շրջանը երեք տարի է 1. պատրաստական ընթացք, որ մէկ տարի կը տեւէ, եւ 2. բուն ընթացք, որ երկու տարի կը տեւէ:

Պատրաստական ընթացքը կուտայ այն հարկաւոր զարգացումը ամեն օտար եւ ֆրանսացի տղաքներու, որ կը փափաքին բուն ընթացքին հետեւիլ: Այս ընթացքին մէջ կը սովորին.

Մաթէմատիք, երկրաչափութիւն, քիմիա եւ ֆիզիք: Ֆրանսերէն եւ օտար լեզուներ, ինչպէս նաեւ տոմարակալութիւն, աշխարհագրութիւն եւ պատմութիւն:

Այս տարին թէ եւ պարտաւորիչ չէ, սակայն օգտակար է ոչ միայն ֆրանսացիներու մեծամասնութեան՝ այլ անհրաժեշտ պէտք մը օտար ուսանողներու համար:

Պատրաստական ընթացքին հետեւելու համար ֆրանսացիները գրաւոր եւ բերանացի քննութիւններ կ'անցնեն. իսկ օտարները կ'ընդունուին առանց քննութեան: Իարձեալ, օտարները այս ընթացքին կրնան հետեւիլ մինչեւ որ ֆրանսերէն լեզուն բաւականաչափ սովորին եւ յաջողին աշակերտ արձանագրուիլ ու բուն ընթացքին մրցումն անցնել: Ընդունելութեան տարիքը 15 էն վար չկրնար լինիլ:

Վարժարան արձանագրուած պահուն պէտք է ներկայացնել՝ 1. վաւերական ծննդագիր մը ֆրանսերէն լեզուով (օտարները անշուշտ), 2. բարի վարքի վկայագիր՝ կրթական այն հաստատութիւններու կողմէ, ուր աշակերտը իր

ուսման վերջին երեք տարիներուն մէջ յաճախած է, Յ. առողջական վիճակի հաստատագիր մը եւ Կ. մուտքի քննութեանէ ազատ լինելու համար (առաջին տարուան), Գիտութիւններու եւ Գրականութեան Պսակաւորի վկայական մը :

Պատրաստական ընթացքի ծրագիրը կը պարունակէ այն ամեն նիւթերը որ հարկաւոր են բուն ընթացքի մրցումին. այդ ծրագիր, զոր քիչ մը վարը պիտի ներկայացնենք, անփոփոխ է ձրանս. բոլոր առեւտրական վարժարաններու մէջ. ու այս ալ այն պատճառով որ իր ամբողջութիւնը կը կազմէ տարրական առեւտրական կրթութիւն մը, որ թոյլ կուտայ այն ամեն երիտասարդներու, որ իրենց ուսումը չեն կրնար աւելի հեռուները մղել, կարենալ բաւական կերպով իրենց գործերը կառավարել եւ յաջողիլ :

ՄՐԱԳԻՐ.—Թուրքախոսներու.—Աղանկարա.—Երկրագալուսներու.—Քիւնիս.—Բնագիտութիւն.—Առեւտրական Աշխարհագրութիւն.—Պատմութիւն : Ժամանակակից պատմութիւն Լուչովիկոս ԺԱ. Էն սկսած մինչեւ մեր օրերը :—Օսար յեզուներ (Անգղերէն, Գերմաներէն, Սպաներէն) :—

Բուն ընթացքի մրցումի քննութիւնները անցնելու համար այս առարկաները բաւական են. հետեւաբար ամեն անոնք որ ունին վերը յիշուած ուսումնական վկայագիրը եւ մասնաւորապէս պատրաստուած են լաւ կերպով, (սեսակիս եւ գործնական) կրնան, առանց պատրաստական ընթացքին հետեւելու մրցումի՝ ներկայանալ. որուն ծրագիրը, ընթերցողը պիտի գտնէ բուն ընթացքի վրայ գրուած բաժնին մէջ : Բայց չմոռնանք չեչտել՝ թէ մենք երբէք համամիտ չենք որ օտարականները մանաւանդ՝ ուղղակի բուն ընթացքը մտնելու փորձեն, եթէ երբէք ձրանսական լիզուրին տիրացած եւ երկրորդական բարձրագոյն վարժարանի մը հետեւած չեն :

Առաջին տարիին մէջ կ'ուսուցուին, վերոյիշեալ առարկաներէն զատ՝ Հաւատարմագրութիւն (ժամօթութիւններ առեւտրական թուղթերու վրայ, տարրական օրէնքներ, տոմարներ եւ հաշուեկշիռ). Գործնական օրհնարութիւն. Բնապատմութիւն, որոնք հարկաւոր չեն մրցումի միջոցին :

Բուն ընթացք. — Երկու տարի կը տեւէ. կը կազմէ

առեւտուրի արհեստական եւ ճշմարիտ կրթութեան բարձրագոյն շրջանը: Ինչպէս ըսինք այս ընթացքին հետեւելու համար պէտք է անպատճառ մրցում անցնել, ֆրանսացի թէ՛ օտար առանց բացառութեան:

Մրցումի ներկայանալու համար պէտք է 15 օր առաջ, այսինքն միշտ սեպտեմբեր ամիսի սկիզբները գրեթէ, վարժարանին տեսչութեան իր ծնողքէն կամ պաշտպանէն վաւերացուած խնդրագիր մը գրել, կցելով անոր մեր վերջիչած վկայագիրը:

Կ'ընդունուին, որոշեալ չափով մը, ազատ ուսանողներ, առանց ո՛ր եւ է քննութեան որոնք կ'ստանան, իրենց շըրջանը աւարտելէ յետոյ, տեսչութեան կողմանէ, յայտնագիր [certificat] մը՝ վարժարանի ընթացքին հետեւիլին հաստատող:

Մրցումը կը լինի գրաւոր եւ բերանացի:

Գրաւոր առարկաներն են. — 1. Շարադրութիւն Մաթէմաթիք գիտութիւններու, որ կը պարունակէ միանգամայն թուաբանութիւն Ալճէպրա եւ Երկրաչափութիւն, որուն համար միջոց կուտան երեք ժամ:

2. Ֆրանսերէն շարադրութիւն (երկու ժամ). Խմբագրութիւն, Ուղղագրութիւն եւ Գեղագրութիւն:

3. Շարադրութիւն օտար լեզուով մը՝ (երկու ժամ) բառարանի միջոցաւ:

4. Աշխարհագրութեան վրայ շարադրութիւն (երկու ժամ):

Բերանացի առարկաներ. — Թուաբանութիւն, Գիմիաբանութիւն, Պատմութիւն: Օտար լեզու (Թարգմանութիւն եւ խօսակցութիւն):

Իւրաքանչիւր առեւտր. վարժարանի աշակերաններու թիւը կ'որոշուի ամեն տարի նախարարական հրամանով. այնպէս որ մրցումի ներկայացողներու մէջէն միայն կ'ընդունին անոնք որ համեմատաբար բարձրագոյն նօթերը ըստացած են:

ՎԿԱՅԱԳՐԵՐ . — Իւրաքանչիւր աշակերտ կ'ստանայ բարձրագոյն վկայագիր [diplôme supérieur], վարժարանէն հեռացած պահուն, երբ իր երկու տարուան ուսման միջոցին ստացած նօթերը 65 % համեմատութիւնն ունին. ընդհակառակը կ'ստանայ ուսման հաստատագիր [certificat

d'étude ], երբ իր նօթերու համեմատութիւնը 55 օ/օ է :

Այն աշակերտները որ առաջին տարիին վերջը չեն կրնար միջին թիւը, 50 օ/օ, ստանալ վարժարանէն կ'արտաքսուին: Իսկ անոնք որ այդ կէսը ստացած են կրնան երկրորդ կարգին հետեւիլ. եւ կամ առաջին տարին կրկնել, եթէ կուզեն անպատճառ բարձրագոյն վկայական ստանալ:

Այս ընդհանուր ծանօթութիւնները տալէ վերջ, որոնք գործադրելի են գրեթէ Ֆրանսայի մէջ գտնուող բոլոր առեւտրական վարժարաններու մէջ, անցնինք անոնց մի քանիին ինչ ինչ պայմաններու տարբերութիւնները ցոյց տալ:

Առեւտրական բարձրագոյն ուսումներու վարժարան (Փարիզ)—Ecole des hautes études commerciales).—Ֆրանսայի առեւտրական վարժարաններու առաջինն է. իր վկայականը իրաւունք կուտայ ներկայանալ այն ամեն մրցումներու, որոնց մէջ յաջողութիւնը բարձր պաշտօններու կը կոչէ թեկնածուները, ինչպէս հիւպատոսութիւն, պաշտօններ՝ առեւտրական նախարարութեան, մաքսային եւ դաշխական գործերու վարչութեան եւ նոյնիսկ պատերազմական եւ ելեւմտական գործոց նախարարութեան մէջ. դարձեալ զաստուութեան իրաւունք ունենալ ինչպէս տոմարակալութեան նոյնպէս ալ առեւտրական ուսումներու:

Բռն ընթացի կրթութեան ծրագիրը. —Առեւտուր եւ տոմարակալութիւն. —Օտար լեզուներ. —Մաթէմատիք. —Ուսումն առարկաներու. —Փորձ եւ տարրալուծում. —Առեւտրական պատմութիւն. —Ֆրանս. հասարակային եւ քաղաքական իրաւաբանութեան տարրերը. —Առեւտրական, ծովային եւ ճարտարագիտական օրէնսգիտութիւն. —Օտար ազգերու առեւտր. օրէնսգիտութիւն. —Քաղաքային տնտեսութիւն. —Գործաւորական օրէնսգրութիւն. —Մաքսային եւ ելեւմտական օրէնսգիտութիւն. —Փոխադրութիւններու ուսում. —Առեւտրական գործ ինքեր. —Գեղագրութիւն:

Աշակերտը պարտի սովորիլ երկու օտար լեզուներ: Այս լեզուներու համար չարաթական դասախօսութիւններ կը լինին՝ աշակերտը խօսակցութեան վարժեցնելու նպատակով: Պատրաստական ընթացքը մտնելու համար քննութիւն հարկաւոր է:

Վարժարանը ունի 6000 է աւելի հատոր պարունակող

գրադարան մը, աշակերտներու արամադրութեան տակ զըրուած : Վարժարանը կ'ընդունի գիշերօթիկ, կէս գիշերօթիկ եւ ազատ ուսանողներ : Գիշերօթիկ լինել խիստ օգտակար է մասնաւորապէս պատրաստական ընթացքի եւ բուն ընթացքի առաջին տարիներուն մէջ :

Վճարումները կը լինին երեք ամիսը մի անգամ եւ կանխիկ : Պատրաստական ընթացքի հետեւողները կը վճարեն վարժարանին երբ գիշերօթիկ են, 2400 Ֆրանք . միեւնոյն պայմաններու մէջ բուն ընթացքին հետեւողները 3000 Ֆր. կէս գիշերօթիկները 1500 Ֆր. իսկ ազատները 1200 Ֆր. :

Գիշերօթիկ աշակերտները իրենք կը հայթայթեն իրենց ո՛չ միայն զգեստները այլ եւ ճերմակեղէնները, անկողինի սաւանները եւ գրքերը :

Առեւտրական բարձրագոյն վարժարան (Փարիզ) — [ École Supérieure de Commerce ] . — Այս վարժարանը եւս իրաւունք կուտայ իր վկայականը կրողներուն բարձրագոյն պաշտօններու մրցումներու ներկայանալուն, բացի ուսուցչութիւնէ :

Ծրագիրը կը տարբերի առաջինէն միայն սա տեսակէտով որ հոս Բիմիարանութեան եւ Բնագիտութեան մասնաւոր ուշադրութիւն դարձած է :

Վարժարանը կ'ընդունի գիշերօթիկ եւ կէս գիշերօթիկ աշակերտներ միայն : Վճարումները եռամսեայ եւ կանխիկ են :

Ինչպէս պատրաստական նոյնպէս ալ բուն ընթացքի մէջ աշակերտները կը վճարեն 2700 Ֆրանք տարեկան :

Աշակերտները իրենք կը հողան, ինչպէս բարձրագոյն ուսումներու վարժարանի մէջ, իրենց զգեստները, ճերմակեղէնները, անկողինի սաւանները, գրքերը եւ այլն : Ո՛չ մի առեւտր. վարժարան միօրինակ զգեստ չունի :

Չմոռնանք յիշեցնել որ մեծ արձակուրդներու միջոցին այն աշակերտները, որ վարժարանը կ'ուզին մնալ, պէտք է աւխը վճարեն 200 ֆր. առևտրագն :

Առեւտրական բարձր. վարժարան (Մարսիլիա) . — Վարժարանը գիշերօթիկ չէ : Վարժարանական տուրքի վճարումները եռամսեայ են եւ կանխիկ : Պատրաստական ընթացքին մէջ աշակերտները տարեկան կը վճարեն 400 Ֆր. իսկ բուն

ընթացքին մէջ 600 Փր. : Կայ նաև 30 Փրանք տարեկան աւելորդ տուրք մը :

Աշակերտները կրնան կէսօրները վարժարանը ճաշել . եթէ վճարեն ամսական 40 Փրանք :

Դարձեալ, զաստուի մը հսկողութեան տակ, վարժարանը ունի գիշերօթիկ հաստատութիւն մը, ուր աշակերտները կրնան ուտել եւ քնանալ . հոս մտնել ուզող աշակերտները պատրաստական տարիին մէջ կը վճարեն վարժարանին տարին 1800 Փրանք . իսկ բուն ընթացքին մէջ 2000 Փր. : Այս վճարումին մէջ հաշուած է նաև կրթութեան ծախքը : Հոս եւս զգեստեղէններու մատակարարումը աշակերտներու վրայ է :

\* \* \*

Բացի վերոյիշեալ առեւտր. վարժարաններէն կան նաև ուրիշներ Պօրտօ, Լիոն, Հալլը, Լիլ, Ռուան, Նանսի, Մոնփէլիէ, որոնց ծրագիրները որ եւ է զգալի տարբերութիւն չունին :

Փարիզի մէջ կեանքը համեմատաբար աւելի սուղ ըլլալով, հոն գտնուող առեւտր. վարժարաններու թոշակը բարձր նշանակուած է : Ամին պարագայի մէջ առեւտր. վարժարան մտնել փափաքող օտար ուսանող մը առնուազն ամիսը 250 — 300 Փր. ունենալու է :

Առեւտր. վարժ. Ուսանող մը

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Պ ա տ ր ա ս ա ե ց

Ն Շ Ա Ն

### ՎԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Առողջապահութեան գլխաւոր նպատակն է զգուշացնել մարդիկ որ չծծեն վարակիչ սերմեր՝ ինչպէս իրենց ապրած միջավայրէն, նոյնպէս զիրենք չըջապատող անհատներէն :

Իւրաքանչիւր մարդ իր մարմինին բնական խոռոչներուն (քիթ, բերան, աղիք) մէջ ունի արդէն բաւական քանակութեամբ ախտաւոր սերմեր քնացած վիճակի մէջ . ասոնք իրենց գործունէութիւնը կ'սկսին այն ատեն երբ նպաստաւոր պայմաններ կը ներկայանան :

Վարակում տեղի կ'ունենայ փոշիներու միջոցով, որ իրենց մէջ կը պարունակեն վտանգաւոր հիւանդութիւններու սերմեր. թոքախտաւորին խուխը (crachat) չորցած՝ հոն փոշիացած վիճակի մէջ կը գտնուի. ու ծծումով՝ թոքախտը իր համաճարակի սահմանները կ'ընդարձակէ :

Շրթունքներու հպումը՝ վարակիչ սերմերու մշակումի նպաստաւոր վայրերու մէջ առաջ կը բերէ, փորձնականապէս հաստատուած իրողութիւն մ'է ասիկա, վարակիչ սերմերու բանակներ, որոնց թիւը քանի մ'օր վերջը՝ միեւնոյն նպաստաւոր պայմաններու տակ աճելով միլիոնաւորներու կը բարձրանայ : Ուրեմն, բերանէ բերան վարակումի մը գոյութիւնը կը յայտնուի, առաջին ակնարկով : Այս տեսակ հպումներ առօրեայ կեանքի մէջ հազուադէպ լինելով, բացի մէկ քանի պարագաներէ՝ առողջաբանին չի վերաբերիր միջամտել հոն (սիրային համբոյրներ, ամուսիններու ողջադուրանքներ) : Բայց անուղղակի կերպով այս օրինակ հպումներ կարծուածէն աւելի յաճախադէպ են, որ տեղի կ'ունենան առարկաներու միջոցով. բան մը՝ որ հակառակ իր ներկայացուցած ահարկու վտանգին, պէտք եղած ուշադրութիւնը չէ հրաւիրած տակաւին իր վրայ :

Միայն գաղղիական հիւանդութեամբ [ ֆոհէկի—syphilis ] զբաղողներ՝ առարկաներու միջոցով վարակումներ յիշատակած են : Այդ հիւանդութիւնը ունեցողի մը ծխափողը՝ երկրորդ անձի մը հաղորդած է այդ ախտը, որ անով ծխած է : Դարձեալ ապակիի գործարանի մը մէջ, փչելու ծառայող եղէգը գործածող մը գաղղիական ախտ կ'ստանայ, որովհետեւ զայն իրմէ առաջ այդ ախտը ունեցող մը գործածած էր : — Բայց ո՞վ կրնայ լուսաբանել, այն ճշմարիտ պարագան ուր թոքախտաւոր մը ծծեց այդ ախտին սերմերը . յինչեւ հիմա գոհացուցիչ պատասխան դեռ տրուած չէ :

Խիստ բազմաթիւ են, իրօք, այն պարագաները, ուր մէկու մը բերանը տարած առարկան ուրիշի մը բերնին կը հպի, իր կարգին, ինչպէս տղայոց խաղալիքները, փոսի փուլերը, զրչածայրը, երաժշտութեան գործիները, դրամները, մատիտը, եւն. եւն. :

Ամեն կողմ հասարակաց կոչուած ազբիւրներ կան, որ ընդհանուրին ծառայող խմելու ամաններ ունին. անոնցմով իրենց ծարաւը կը յագեցնեն հաւասարապէս թոքախտ

տաւորը, ինչպէս առողջը. գաղղիական ախտ ունեցողը ինչպէս նաեւ չունեցողը: Խմելէ առաջ, այդ ամանները մաքրելու հոգն իսկ յաճախ անտեսուած է. որոնց վրայ կը գտնուին ստէպ անմաքուր ձեռքի մը թողած բոլոր ազտեղութիւնները: Եթէ այդ ջուրի ամանները լինէին անագուած եւ փայլուն՝ փոքրիկ լուացում մը, ցօղուել (rincer) մը շատ անգամ բաւական էր թոքախտաւորին կամ որ եւ է ախտաւորի անոր վրայ թողուցած վարակիչ սերմը վտարելու: սակայն ջուրի հետ շարունակական հազորգակցութիւն մը, անոնց ժանգոտելուն պատճառ եւ հետեւաբար տարափոխիկ սերմերուն պատսպարան կը գտնուայ. ու շտապ ցօղուել մը անբաւական կը լինի զանոնք պէտք եղածին պէս մաքրելու:

Շատ մը երկիրներու մէջ՝ բացի հասարակաց աղբիւր կոչուած ջրարաչխական վայրերէ, կան ջուրի մնայուն շտամարաններ, ջրհորներ, որոնք դարձեալ հանրութեան կը պատկանին: Ջուրը դուրս քաշելու համար կը գործածեն փայտէ խողովակաւոր ամաններ: Մանուաւնդ փայտի խորտուբորտութիւնները, որ միշտ թացութեան տակ շեշտուած կը լինին, ինչպէս նաեւ անոր իր մէջ ծծելու յատկութիւնը, կը հիւրընկալեն անոնցմով ջուր խմող գաղղիական ախտ ունեցողին յաճախ շրթունքներու վրայ ունեցած թարախաւոր վէրքերու տարափոխիկ ժահրը. թոքախտաւորին պաւիլներով լի լորձունքը; խուխը եւն: Այսպէս ոչ միայն ամենաքիչ ժամանակի մէջ ամբողջ ջրհորին ջուրը կը վարակուի, այլեւ իր մէջ ստացած սերմերուն անհոլուն եւ բազմանալուն մեծապէս նպաստելով, ճշմարիտ համաճարակներու պատճառ կը գտնուայ: Թողունք որ, միւս կողմէ, այն ջուրը, որով կը լնուն այդ ջրհորները արդէն հազարաւոր ազտեղութիւններ կը տանի իրեն մէջ, այն առուակներէն որոնցմով ջրհոր կ'առաջնորդուի:

Կին մը կը ճանչնայի որ բոլորովին առողջ վիճակի մէջ գիւղ գացած էր: Վերադարձին իր բերնին մէջ գաղղիական ախտի ստեղծելի վէրքեր առաջ եկան. ու ամենակարճ ժամանակի մէջ, փտութիւն առաջանալով իր մահը անխուսափելի եղաւ: Պատճառը խիստ պարզ էր, այդ գիւղին մէջ ջրհորներ միայն ամառնային դով ջուր կը հայթայթէին. խեղճ կինը դժբախտութիւնը ունեցած է անգիտակցաբար

գաղղիական խտաւորի մը ջրհորին ամանին վրայ թողած վարակիչ ժահրը ծծելու : Այդ հիւանդութիւնը, ինչ որ տարօրինակ կը գտնէին շատեր, կը տարածուէր չափէն աւելի գիւղերու մէջ . բայց ինչպէս կը տեսնուի պատճառը խիստ պարզ է : Ինչպէս գաղղիական խտաւը, նոյնպէս ալ հիւժախտը, թոքախտի սերմերը, կարելի է ստանալ շատ դիւրութեամբ միեւնոյն պայմաններու մէջ, ու օր մ'ալ յանկարծ զարմանալ թէ ինչպէս թոքախտ եղած է կամ ուրկից ըստացած է զայն :

Կերակուրի ամաններու, պատառաքղի, դանակի եւ ուրիշ սնունդի ու տնական գործիներու միջոցով հիւանդութիւններու փոխադրումը՝ անհատէ անհատ, նախատեսելի պարզ պարագայ մ'է . ինչպէս միեւնոյն ամանէ եւ գաւաթէ ջուր խմելը :

Գէշ սովորութիւն մ'եւս, որ վարակումի կը նպաստէ, տակաւին գոյութիւն ունի հայ ժողովուրդի շատ մը խաւերուն մէջ, այն է մէկ ամանէ կերակուր ուտելը : Եթէ տան մէկ անգամը որ եւ է վարակիչ հիւանդութիւն ունի եւ զայն տարափոխելու նպաստաւոր պայմաններու մէջ կը գտնուի, խիստ մեծ հաւանականութիւն կայ որ տան մէջ ուրիշներ ալ այդ հիւանդութիւնը անկասկած ստանան :

Չատ զատ ամաններու մէջ կերակուր ուտելը եւ իւրաքանչիւր անհատի յատուկ սպաս մը լինելը՝ բնական եւ անանցանելի պահանջ մը պէտք է նկատուի այլեւս ամեն տեղ : Իսկ եթէ վարակիչ հիւանդութեամբ տառապող մ'ալ կայ՝ հարկ է նոյն իսկ անոր սպասը հակահետել : Հասարակաց կոչուած ջրհորներէ ջուր պէտք չէ խմել . իսկ աղբիւրներէ խմուած պահուն՝ ուշադրութիւն դարձնել ամանին վրայ ու զայն լաւապէս մաքրել առաջին խնամք մը լինելու է : Նոյն իսկ տան մէջ բոլոր անդամներ պէտք է ունենան իրենց ջուրի գաւաթը՝ ինչպէս որ պիտի ունենան գինիինը, սուրճինը եւն : Չուր առնել որ եւ է տեղէ ոչ թէ ուղղակի գաւաթով, այլ ծորակով (robinet — մուտլուք) մը, պէտք է իբր կարեւոր եւ մեծ անհրաժեշտութիւն մը՝ չը մոռնալ եւ գործադրել :

ժանխտեկը . ( La Fièvre typhoïde ). — Ժանտառեկը՝ զոր ժողովուրդը քիթօ կ'անուանէ, վարակիչ հիւանդութիւններու գլխաւորներէն մէկն է : Իր պատիւը կը փոխադրուի

մարդուն՝ զանազան ճամբաներով, ինչպէս կաթը, ջուրը, կերակուրները, աղբային աղտոտ ջուրերու գոլորշիացումը եւայլն: Սակայն իր վարակումին ամենագլխաւոր միջոցներէն մին մինչեւ վերջերս մեծ ուշադրութեան առարկայ չէր դարձած: Գերմանացի նշանաւոր բժիշկ մը զայդ փորձով հաստատած է: Այս օրինակ անտեսումի պատճառը լոկ այն բանն է որով վարակումի զանազան պարագաներ միաժամանակ կը պատահին: Թիֆօէ բռնուողներու սենեակները չարխազանց կը նպաստեն այդ ախտի տարածումին:

ՅՅ տարեկան մարդ մը կ'այցելէ իր մօրը եւ քրոջը որ թիֆօէ բռնուած էին. ու հիւանդ կ'իյնայ երբ արդէն մայրը եւ քոյրը ապաքինութեան մէջ էին: Աղջիկ մը, թիֆօէ բռնուած ու մեռած ութ տարեկան քրոջ մահէն շաբաթ մը վերջ՝ թիֆօէն բռնուեցաւ զայն խնամած ըլլալուն համար:

Սենեակներու միջոցով վարակումը՝ բազմաթիւ նմանօրինակ միջադէպերու տեղի տուած է: Այդ ճամբով վարակումներ աւելի յաճախադէպ են բազմամարդ տուներու՝ քան թէ օդաւէտ եւ բարեկեցիկ բնակարաններու մէջ:

Քաղաքի մը մէջ, տասը տարի պատահած թիֆօի վարակումներէն չափելով՝ գտած են որ միջին հաշուով բազմամարդ եւ չքաւոր տուններու մէջ համեմատական թիւը 85 առ հարիւր է. իսկ մաքուր եւ բարեկեցիկ բնակարաններու մէջ 14 առ հարիւր: Ազգատութիւնը իր վտանգները ունի բնականաբար այս տեսակ պարագաներու մէջ. բայց տարբերութիւնը այնքան խոշոր է որ օդի միջոցով ժամատատենդի վարակումը լիապէս կը հաստատուի:

Ուրեմն թիֆօի ժամանակ հիւանդները կարելի եղածին չափ առանձնացնել սենեակի մաքրութեան ու օդաւէտութեան հոգ տանիլ առողջներուն անվտանգ մնալուն համար իսկ անհրաժեշտ է:

## Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը

### Տ Գ Ե Ղ Ե Ր Ե Ի Ո Յ Թ Ն Ե Ր

Մինչդեռ մէկ կողմէն հայ մամուլը կը ճգնի ցոյց տալ լուրջ քննադատութեան ու հմուտ, ուղղամիտ եւ բանիբուն քննադատներու պէտքը մեր մէջ, ամէն իր, ամէն երեւոյթ իր բնական արժէքովը գնահատելու, եւ այսպէս մատնանիշ

ընկելու ժողովուրդին՝ օգտակարն ու վնասակարը, միւս կողմէն, գրական հրապարակը կը խուժեն նորանոր ինքնահրաւէր ջոկատներ տգէտ ու իմաստակ գրչակներու, որոնք քննադատի կամ հրապարակագրի փառապանծ սքեմին տակ իրենց անճարակութիւնն ու տգիտութիւնը պարտկած, անխղճօրէն եւ ցնդի-քնդի գրուածքներով կ'աղտոտեն գրական աշխարհը :

Ասոնք շատ տգեղ երեւոյթներ են, որոնք ծնունդ կ'առնեն եւ օրէ օր կ'աճին ու կը ստուարանան լոկայն պատճառով, որ նախ մեր լրագրապետները կամ խմբագիրները, այս ինչ կամ այն ինչ պատճառով (որոնք երբեք արդարանալի չեն կրնար նկատուիլ), կարծես բոլորովին կորսնցուցած են ամէն հեղինակութիւն, ու անկարող դարձած զեկալարելու իրենց հսկողութեան յանձնուած թերթը, որու բովանդակութեան մէն մի յօդուածին, մէն մի բառին պատասխանատու են, եւ երկրորդ՝ որովհետեւ կը պակսին մեղ բարեսիրճ ու հմուտ քննադատներ, որ՝ այս տեսակ տգեղ երեւոյթներու առջեւ՝ վճռական շեշտ հարուածով մը ջախջախեն գրական այդ մակաբոյժներն ու հրապարակը մաքրեն անպէտք ու վնասակար տարրերէն :

Ու զարմանալին այն է, որ գրեթէ այն բոլոր թերթերը որոնք նոյն սկզբունքները կը քարոզեն, միջոակից անտարբերութիւն մը ցոյց կուտան այս տեսակ եպերելի երեւոյթներու առջեւ, եւ կը հիւրասիրեն այն տեսակ ակնդցփեղ գրուածքներ, որոնք գրական կամ գիտական որ եւ է արժէք չունենալէ զատ, բացարձակապէս անպէտք են առաջդիմութեան տեսակէտով. ու եթէ քիչ մը խորը քննենք, պիտի տեսնենք բացայայտ կերպով՝ որ այդ տեսակ գրուածքներ միշտ յեախն նպատակներ ունին, նպատակներ՝ որոնք խիստ բազմազան են եւ կը տարբերին իրարմէ — ծիծաղելիէն մինչեւ ամենէն ստոր ու դձուձ կիրքերը — այդ սճով գրողներու անձնական ձգտումներուն ու բարոյակսն արժանիքին համեմատ, եթէ երբեք ներելի է այսպէս ըսել :

Բնական է թէ, վարժարանի մէջ իր չունեցած ձիրքերուն համար երես առած տղեկ մը, հազիւ թէ ոտք դրած գրական ասպարէզի վրայ, երբ կը փորձէ իր համբակ գրելով Յ. Պարոնեանի յիշատակն աղարտել՝ զայն « չուկայի մարդ, եւն. » կոչելով, պարզ է որ, խեղճ ու կրակ յաւակնոտութեամբ մը, աշխատած է արատաւորել հանճար երգիծաբանին սիրելի անունը՝ անով իրեն կեղծ արժանիք մը ստեղծելու համար. բայց երբ այդ միեւնոյն շփացած

տղան կը յանդգնի տարածայնել չորս կողմ՝ թէ հանրածա-  
նօթ գրագէտ մը, իր ուսուցիչը, որուն ամենէ աւելի ինքը  
պէտք էր երախտապարտ լինել, « հիւանդ, ցնորած, ապուշ »  
է, հոս արդէն անձնական գծուձ շահն է որ երեւան կուգայ  
եւ կը ձգտի տապալել ազգային մեծ աշխատաւոր մը . . . անոր  
հացը խլելու համար :

Աստուցմէ զատ կան նաեւ ուրիշ գրողներ, որոնց համար  
բացարձակապէս կարելի չէ ըսել՝ թէ առաջնորդուած են այս  
կամ այն տխրոյթ նպատակով . սակայն իրենց գրութիւններն  
այնքան ճապարհ, անխմատ ու ողորմելի են՝ որ մարդ ի զուր  
կը փնտռէ անոնց մէջ որ եւ է գաղափար, որ եւ է միտք . . .  
Իսկ բառեր՝ որքան որ կ'ուզէք, հոգ չէ եթէ անոնք ալ ան-  
տեղի ու հակասական լինին :

Չերկարելու համար, մէջ կը բերեմ քանի մը օրինակ-  
ներ, որոնք բաւական պարզ գաղափար մը կրնան տալ մեր  
կարգ մը նորիւրուկ գրիչներուն դատելու եղանակին վրայ :  
Պ. Յ. Ճաղարբեգեան, Ա. Ը. Ծատուրեանի Բանաստեղծու-  
թիւններու մասին գրած յօդուածի (Տես, ԼՍԻՄՍՅ, 1899 Բ հսր.)  
երրորդ բաժինին մէջ, Սերի մասին խօսելով՝ տեսէք թէ ինչ  
հրաշալի կարծիքներ կը յայտնէ .

« Սէ՛ր . . . որ բանաստեղծը չէ իւր քնարը լարել այդ  
նիւթի համար, ո՞վ, որ մի քանի ոտանաւորներ է հիւսել,  
չէ երգել սէրը : Կնարերգութեան յաւիտենական նիւթն է  
զա եւ գլխաւոր մօտիւր : » Աւելի ճիշդ ու գեղեցիկ բացա-  
տրութիւն չէր լիներ անշուշտ ցոյց տալու համար՝ թէ սէրը  
ինչ դեր ունի քնարերգութեան մէջ, որուն իսկապէս « գըլ-  
խաւոր մօտիւր » եղած է միշտ . սակայն պէտք չէ անպա-  
րել, որովհետեւ պրն. քննադատն իր խելապատակին մէջ  
նոր գիւտ մ'ըբած է . . . « Բայց սէր էլ կայ, սէր էլ : կայ  
հեթանոսական՝ սէր, կայ եւ քրիստոնէական՝ սէր : » Եւ իր  
մեծամտութեան մէջ սնամէջ տիկի մը չափ ուռած՝ կ'աւել-  
ցնէ . « Երբ կնոջը մինք սիրում ենք նրա համար, որ կին է,  
մի եզ, երբ մեր մէջ սէր են գրգռում նրա աչքերը, ունքերը,  
հասակը . . . երբ մինք պաշտամունքի առարկայ ենք դար-  
ձնում կնոջ մարմինը, յեշտ . . . այդ հեթանոսական սէր է : »  
Ու տող մը վար, չի քաշուիր նաեւ խոստովանելու որ « բա-  
նաստեղծերի մեծամասնութիւնը հէնց այդ սէրն է երգում : »  
Ուրեմն այդ « Բանաստեղծների մեծաւաստեղծները » պէտք է  
համարել ստոր, մոլորցնող, անասնական, աշխարհի մարդիկ  
քանի որ իրենց երգած սէրը « հեթանոսական սէր է, որ ո՛չ  
միայն արժանի չէ մարդկային արժանապատուութեան, այլ

եւ սոսկալի կերպով ստորնացնում! է մարդուն եւ անասունների աշխարհը գցում!» : Փի'շտ... Ճաղարբեգեան ո՞ւր սովրեցաւ արդեօք այս հրաշագեղ վարդապետութիւնը... եթէ իր կեղծ համատուութիւնը կ'ուզէ քրիստոնէութեան կռնակին բեռցնել՝ չարաչար կը սխալի. որովհետեւ կրօնը երբեք չ'արգիլեր սէրը. Յիսուս ալ պատուիրած է, — զիրար սիրել — աճիլ եւ բազմանալ — թողուլ հայր՝ մայր եւ կնոջ ետեւէն երթալ եւ այլն —. անշուշտ բառախաղութեան համար չէ ըսուած այս ամէնը : Եւ կարծեմ թէ Ալֆրէտ տը Միւսէ, Լամարթին, Շաթոպրիան, Քոփէ որ միշտ (հեթանոսական) սէր երգած են, Ճաղարբեկեանին չափ բարեպաշտ եղած են, եթէ ոչ աւելի :

Յօգուածագիրը իր յօնքերը կը պոստէ երբ պ. Մատուրեան կուգայ իր սկանջին փսիսալ՝ թէ « առանց սիրոյ՝ սրտի համար չկայ կեանք », ինչ որ անմահ Դուրեան կը նկարէ աւելի բոցավառ սողերով .

Թէ կոյսը չըլլար  
Սիրուն ու անբիծ,  
ՉԱստուածն այն երկնից  
Մարդ ո՞ւր կը կարգար...

Հապա ո՞ւր թողունք Սողոմոնի « Երգ Երգոց »ը...

Պր. Ճաղարբեգեանի ամբողջ գրուածքն այնքան հակասական է որ չ'արժեր աւելի ծանրանալ վրան. մանաւանդ որ շատ տեղ գրածէն ալ տեղեկութիւն չունի, եւ ինք իր ձեռքով թակարդը կ'իյնայ երբ մեզ կը ներկայացնէ ոտանաւոր մը, ուր իբրեւ թէ « Մատուրեան չարաչար մոլորուած է, երբ կեանքին գիմելով » կ'ըսէ .

Մանր չէ քո խաչն, երբ մենք կորացած  
Այդ խաչի տակին՝ խուլ հառաչելիս,  
Ունենք մտերիմ, որ մեզ համազգաց,  
Մեզ հետ խնդում է եւ մեզ հետ լալիս...  
Եւ որպէ՛ս անյագ, որպէ՛ս համարձակ  
Յառա՛ջ, միշտ յառա՛ջ ձգտում է հոգին,  
Երբ կեանքում, որպէ՛ս յուսատու հրեշտակ,  
Ընկերն ընկերին սեղմում է կրծքին :

Այն տեղ մտերմի սիրառատ գրկում  
Եւ փուշն է ծաղիկ, եւ լացը ծիծաղ .  
Այնտեղ ձմեռն է գարնան պէս ժպտում,  
Այնտեղ եւ մահուան համբոյրն է խաղաղ .

մինչդեռ այս ոտանաւորը կեանքի իրական պատկ'ը մ'է եւ կարելի է շատ յաջող համարել :

Լուսնայի նոյն գիրքին մէջ (էջ 355), ուրիշ յօդուած մը «խաչկոնցու թիւն» վերնագիրով շա՛տ անախորժ տպաւորութիւն կը թողու առ հասարակ ընթերցողներուն վրայ: Պ. Մ. Աղաբէգեանց, որ լուրջ հեղինակի մը համբաւը կը վայելէ, այդ տեսակ աղայամիտ յօդուածով մը աւելի կը նպաստէ իր անունն արատաւորելու, քան թէ հարուածելու իր հակառակորդը:

Պ. Աղաբէգեանց արդէն բմբռնած լինելու էր այդ բանը: \* Միայն քննադատելու բարի տրամադրութիւնն բաւական չէ քննադատ լինելու: Բացի մտաւորական բազմակողմանի պաշարէ մը, քննադատ մը պէտք է գիտնայ քննադատելու եղանակ: Քննադատութեան մէջ մանաւանդ պէտք է ունենալ հակիրճ ոճ, ու հոն խնդիրները միայն հերքողական եւ հաստատական փաստերով պարզելէ յետոյ եզրակացութեան յանդէտու է: Նոր Դարի մէջ գրող մի պարոնի (Միւսս Բերբերան), այս ամեն հարկաւոր յատկութիւնները կը պակասին: Ոչ միայն յաճախ հակասութիւններու մէջ կ'իյնայ, այլ եւ անկապ գաղափարներու բխլար մը կը ներկայացնէ իր գրութիւններու մէջ: Առ հասարակ խիստ սահմանափակ միտք մը կ'արտայայտէ. ամեն բան կը դատէ իր բնագոյններով եւ բնականաբար կ'անճրկի: Երբ կը քննադատուի խիստ լեզու մը գործածած լինելուն, բան մը որ թեթեւ ու անտրամաբան մտքի գործ է, կը բացագանչէ պարզամտորէն. «Ես էլ գրեթէ նոյնն եմ սոսմ եղել» — (Նոր Դար, N° 28, 1900) —: Միեւնոյն համարի մէջ, այդ պարոնը կ'ընդունի թէ «քննադատութիւնը գտող՝ ոչնչացնող եւ ոյժ տուող կարողութիւն» պէտք է ունենայ. խիստ լաւ: — Բայց երբ Յ. Թումանեան իր «Երկու հրէշ» ռոմանակոյնի սկիզբը իր խօսքը վարձկան հայ խմբագրողներու ու հայճոյող, գրչակ քննադատներու կ'ուղղէ, պ. Բերբերեան կրակ կը կտրի՝ իբր թէ՛ գող եւ սիրաբը գող լինէր. ու այդ ջղաձգութեան տակ ինքն ալ իր քննադատած նիւթին ոչ միայն ոճովն ու պղպեղովը կը համեմուի այլ եւ լուրջ քննադատ մը լինելէ բոլորովին կը հեռանայ: Այ՞դ է իր ոյժ տուող քննադատողի կարողութիւնը:

Քննադատելու ձիրքէ զուրկ է այդ պարոնը. ու չենք սխալիր: — (Նոր Դար, N° 32, 1900) Մ. Նալբանդեանի քանի մը նամակները իր ձեռքին տակ ունենալը առիթ բռնելով, այդ պարոնը, անոր վրայ ահագին սիւնակներ կը գրէ, սակայն առանց նախակները մէջտեղ դնելու, որոնք միայն խիստ գեղեցիկ կերպով՝ այդ նշանաւոր հրապարակախօսի տաղանդը պիտի կրնային անգամ մը եւս պարզել ընթեր-



## ԲԻԻԶԱՆԴԻՈՆ

Հ Ա Յ Ա Թ Ե Ր Թ Ա Մ Ե Ն Օ Ր Ե Ա Յ

Ազգային եւ Քաղաքական — Գրական եւ Գիտական

Տէր եւ Տնօրէն, Բիւզանդ Գեջեան

Տարեկան՝ օտար երկիրներ, 40 ֆրանք:

M<sup>r</sup> P. KETCHIAN Bab-Ali Djaddessi N<sup>o</sup> 23-25 [Constantinople]

## ՄՇԱԿ

Գրական եւ Քաղաքական Լ Ր Ա Գ Ի Ր

Տարեկան 30 ֆրանք

Rédac. du journal MSCHAK Tiflis (Russie)

## Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն Մ Ա Մ Ո Ւ Լ

Ազգային, Գրական, Քաղաքական Կիսամտեայ Հանդէս  
Տարեկան 15 ֆր. — — Խմբագիր Մասթոս Մաւրուեան

M<sup>r</sup> Mamourian (Turquie d'Asie) SMYRNE

## Ա Ր Ե Ի Ե Լ Ք

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

Ազգային, Քաղաքական եւ Գրական  
Տարեկան 40 ֆր. — Rédaction du journal « AREVELK »  
Constantinople — (Galata)

## Ն Ո Ր — Գ Ա Ր

Ազգային եւ Քաղաքական Լ Ր Ա Գ Ի Ր  
Տարին 10 բուբլի — Rédaction NOR — DAR Tiflis (Russie)

## Մ Ո Ւ Ի Ր Ճ

Քաղաքական, Հասարակական, Գրական  
Հ Ա Ն Դ Ի Ս

Խմբագիր Աւետիս Արսահանեանց

Տարեկան 30 ֆր. — Rédaction « MOURTCH » Tiflis (Russie)

ձՐԱՆՍԵՐԷՆԻ ԴԱՍ առնել փափաքողները կրնան դի-  
մել մեր միջոցով մեր թերթի Արտօնատէրին (Gérant):

## ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կը կատարուին օտար երկիրներէ եղած ամեն տեսակ  
յանձնարարութիւններ, փութով եւ խնամքով: Դիմել «Հա-  
մալսարան»ի հասցէով՝ Պ. Գ. Պարսիզպանեան

## Հ Ա Յ Ե Ր Է Ն Տ Ա Ռ Ե Ր Ո Ւ Զ Ո Ւ Լ Ա Ր Ա Ն

Կը ձուլուին նաեւ տաճկական, եւրոպական եւ երբայեցերէն  
տառեր: Դիմել՝ M<sup>r</sup> Agop Dzerounian. SOFIA [Bulgarie]

# Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

Կը հրատարակուի ամիսը մէկ անգամ:  
Իւրաքանչիւր թիւը պիտի ունենայ, առնուազն, 48 էջ:  
Բաժնեգինը ԿԱՆԽԻԿ է.

Տարեկան Վեցամսեայ

Ֆրանսա . . . . .	10 Փր.	5 Փր.
Օտար երկիրներ. . . . .	12 »	6 »
Թուրքիա . . . . .	(ողջ) 50 ՂՐԶ.	25 ՂՐԶ.
Ռուսիա . . . . .	5 բուպլի	2 ր. 50 կ.
Ամերիկա . . . . .	2 տոլար	1 տ. 20 ս.

Մէկ թիւի, ՖՐԱՆՍԱ, 1 ՖՐԱՆՔ

Նամակ եւ Գրութիւն ետ չեն արուիր:

Կը տպագրուին, չափաւոր գիներով, ազգեր եւ յայտա-  
րարութիւններ:

Խմբագրութեան՝ նամակ, յօդուած, դրամ, եւայլն, ղրկել՝

RÉDACTION du « HAMALSARAN »

3, Place Monge, 3

PARIS

Խմբագրութիւնը պատասխանատու չէ, իրեն ուղղուած  
նամակներու համար որ ասպակազրուած չեն:

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐԸ

Ախալցխա . — Արժ. Տէր Ն. Բհյ. Համբարձումեանց

Աւերիկա (Troy) . — Ա. Գ. Թորոսեան

Դալրեժ . — Տօք. Կ. Փաշաեան

Երզնկա . — Կ. Նարնջեան

Թոֆար . — Յ. Սիւզմէճեան

Վաշինկրոն . — Ա. Յովսէփեան

Վարոնեժ . — Մ. Թիւթէլեան